

## Արյան ընդհանուր ընդլայնված քննություն (լեյկոֆորմուլայով) (21 ցուցանիշ) 3000 դրամ

**Նկարագիր** Արյան ընդհանուր հետազոտությունը լաբորատոր թեստերի ամբողջություն է, որը տեղեկատվություն է տրամադրում մարդու արյան մեջ գտնվող բջիջների մասին: Այն ցույց է տալիս լեյկոցիտների, էրիթրոցիտների և թրոմբոցիտների քանակը, չափերը, հարաբերակցությունը՝ միավոր չափաբաժնում, հեմոգլոբինի և հեմատոկրիտի կոնցենտրացիան, այլ:

---

### Հետազոտության մեթոդ

- Hb –SLS մեթոդ(գունաչափական)
- RBC/PLT-իմպեդանս իմպուլսի առաջացում
- WBC–հոսքային ցիտոմետրիա (проточная цитометрия)  
**Ի՞նչ կենսանմուշ կարող է օգտագործվել հետազոտության համար** Երակային արյուն (K3EDTA, K4EDTA) **Ինչպե՞ս նախապատրաստվել հետազոտությանը**
- Առավոտյան քաղցած՝ առնվազն 8 -12 ժ
- Ջուրը՝ առօրյա կարգով
- Նախօրեին խուսափել սննդային չարաշահումից
- Բացառել սննդակարգից ճարպային մթերքներ թեստից 24 ժամ առաջ
- Բացառել սննդակարգից ալկոհոլը թեստից 24 ժամ առաջ
- ԿՏ, մամոգրաֆիա և ճառագայթային հետազոտություններից պետք է անցնի 2-3 օր
- Մինչև 1 տարեկան երեխաները չպետք է ուտեն նմուշառումից 30-40 րոպե առաջ
- 1-ից 5 տարեկան երեխաները՝ չպետք է ուտեն նմուշառումից 2-3 ժամ առաջ

### Իրականացման ժամանակացույց

Արդյունքը՝

տվյալ

օրը 17:00:

\*Որևէ պարամետրի միկրոսկոպիկ հաշվարկի դեպքում, պատասխանը տրամադրվում է հաջորդ օրվա ընթացքում:

## Բիլիռուբին ընդհանուր 1000 դրամ

### Նկարագիր

Ընդհանուր բիլիռուբինը հեմոգլոբինի նյութափոխանակության միջանկյալ նյութերի գումարն է, որը պարունակվում է արյան շիճուկում՝ ուղղակի և անուղղակի բիլիռուբին:

Ընդհանուր բիլիռուբինի մակարդակը բարձրանում է տարբեր ծագման դեղնախտների ժամանակ (հեպատոբիլյար հատվածի ուռուցք, լեղաքարային հիվանդություն, հեպատիտներ, զանգվածային հեմոլիզ, Ժիլբերի, Ռոտորի, Դաբին-Ջոնսոնի համախտանիշ և այլն): Դրանց դիֆերենցիալ ախտորոշման համար անհրաժեշտ է նաև բիլիռուբինի ուղղակի և անուղղակի ֆրակցիաների որոշումը:

### Մեթոդ կոլորիմետրիկ

### Կենսասնումուշ Երակային արյուն Clot-Activator

### Հետազոտության նախապայմանները

- առավոտյան քաղցած՝ առնվազն 8 -12 ժ
- ջուրը՝ առօրյա կարգով
- նախօրեին խուսափել սննդային չարաշահումից
- բացառել սննդակարգից ճարպային մթերքներ թեստից 24 ժամ առաջ
- բացառել սննդակարգից ալկոհոլը թեստից 24 ժամ առաջ
- ԿՏ, մամոգրաֆիա և ճառագայթային հետազոտություններից պետք է անցնի 2-3 օր
- մինչև 1 տարեկան երեխաները նմուշառումից 30-40 րոպե առաջ չպետք է ուտեն
- 1-5 տարեկան երեխաները՝ նմուշառումից 2-3 ժամ առաջ չպետք է ուտեն

### Իրականացման ժամանակացույց

արդյունքը՝ տվյալ օրը 17:00:

## Բիլիռուբին ուղղակի 1000 դրամ

### Նկարագիր

Ուղղակի բիլիռուբինը (կապված) բիլիռուբինի տարատեսակ է, որը կարող է լուծվել ջրում և նորմալում օրգանիզմից հեռացվում է լեղու հետ մեկտեղ: Արյան մեջ ուղղակի բիլիռուբինի որոշումը էական դեր է խաղում տարբեր ծագման դեղնախտների ախտորոշման մեջ: Սովորաբար արյան մեջ այս նյութի պարունակությունը ցածր է: Բարձր բիլիռուբինի ամենատարածված պատճառը լյարդի պաթոլոգիան է:

### Մեթոդ կոլորիմետրիկ

### Կենսանմուշ Երակային արյուն Clot-Activator

### Հետազոտության նախապայմանները

- առավոտյան քաղցած՝ առնվազն 8 -12 ժ
- ջուրը՝ առօրյա կարգով
- նախօրեին խուսափել սննդային չարաշահումից
- բացառել սննդակարգից ճարպային մթերքներ թեստից 24 ժամ առաջ
- բացառել սննդակարգից ալկոհոլը թեստից 24 ժամ առաջ
- ԿՏ, մամոգրաֆիա և ճառագայթային հետազոտություններից պետք է անցնի 2-3 օր
- մինչև 1 տարեկան երեխաները նմուշառումից 30-40 րոպե առաջ չպետք է ուտեն
- 1-5 տարեկան երեխաները՝ նմուշառումից 2-3 ժամ առաջ չպետք է ուտեն

### Իրականացման ժամանակացույց

Արդյունքը՝ տվյալ օրը 17:00:

## Կրեատինին շիճուկում գինը՝ 1000 դրամ

**Նկարագիր** Կրեատինինը սպիտակուցային փոխանակության վերջնական արդյունքներից է: Ձևավորվում է կրեատինֆոսֆատային ռեակցիայի արդյունքում մկաններում և օրգանիզմից հեռացվում է երիկամներով, երիկամների աշխատանքից մեզի հետ: Արյան մեջ կրեատինինի պարունակությունը կախված է սեռից, տարիքից, մկանային զանգվածից:

Տղամարդկանց մոտ կոնցենտրացիան նկատելիորեն ավելի բարձր է, քան կանանց մոտ. տարեցների մոտ կրեատինինի սինթեզը նվազում է: Կրեատինինի մակարդակը արտացոլում է երիկամների ֆիլտրման վիճակը, նրա վատթարացման ժամանակ կրեատինինի մակարդակը բարձրանում է: Թույլ է տալիս դատել երիկամային անբավարարության աստիճանի մասին: Այս թեստը նշանակվում է նաև հեմոդիալիզի պրոցեդուրայից առաջ և հետո, և թույլ է տալիս բժշկին տեսնել, թե որքանով է արդյունավետ եղել ընթացքը:

Անալիզի հաճախականությունը որոշվում է բժշկի կողմից՝ կախված հիվանդի առողջական վիճակից և բուժման անհատական առանձնահատկություններից:

## **Մեթոդ** կինետիկ կոլորիմետրիկ **Կենսամուշ** Երակային արյուն Clot-Activator **Հետազոտության նախապայմանները**

- առավոտյան քաղցած՝ առնվազն 8 -12 ժ
- ջուրը՝ առօրյա կարգով
- նախօրեին խուսափել սննդային չարաշահումից
- բացառել սննդակարգից ճարպային մթերքները՝ թեստից 24 ժամ առաջ
- բացառել սննդակարգից ալկոհոլը՝ թեստից 24 ժամ առաջ
- ԿՏ, մամոգրաֆիա և ճառագայթային հետազոտություններից պետք է անցնի 2-3 օր
- մինչև 1 տարեկան երեխաները նմուշառումից 30-40 րոպե առաջ չպետք է ուտեն
- 1-ից 5 տարեկան երեխաները՝ նմուշառումից 2-3 ժամ առաջ չպետք է ուտեն

## **Իրականացման ժամանակացույց**

արդյունքը՝ տվյալ օրը 17:00: \* KT-ի համար հանձնելու դեպքում, պատասխանը՝ 1 ժամից

## Կրեատիվին մեզում գինը՝ 1000 դրամ

### Նկարագիր

Կրեատիվինը սպիտակուցային փոխանակության վերջնական արդյունքներից է: Ձևավորվում է կրեատինֆոսֆատ: Կրեատիվինի ամենօրյա արտազատումը մեզի մեջ համեմատաբար հաստատուն է և համաչափ դրա ամենօրյա ձևավորմանը: Կրեատիվինի բարձրացումը և մեզում, և արյան մեջ վկայում է սննդակարգում սպիտակուցների մեծ քանակի մասին, իսկ եթե մեզում բավարար մակարդակը զուգորդված է արյան մեջ բարձր մակարդակի հետ, ապա դա վկայում է երիկամային անբավարարության մասին:

**Մեթոդ** կինետիկ կոլորիմետրիկ

**Կենսանմուշ** մեզ

### Հետազոտության նախապայմանները

- նմուշառվում է 24 ժամվա մեզը ընդ որում՝ հավաքվում է ստերիլ տարայում՝ 1-ին օրվա առաջին մեզը բաց ենք թողնում, իսկ հաջորդ օրվա առաջին մեզն ավելացնում ենք ընդհանուրին, խառնում, դնում՝ սառնարան, տարայի վրա գրվում է ծավալը (մլ)
- նմուշառվում է մեզի ցանկացած բաժին

### Իրականացման ժամանակացույց

արդյունքը՝ տվյալ օրը 17:00:

**Միզանյութ** գինը՝ 1000 դրամ

### Նկարագիր

Միզանյութը սպիտակուցների և ամինաթթուների նյութափոխանակության վերջնական արդյունքն է: Մինթեզվում է լյարդում ամինաթթուներից և ազատորեն գտվում է երիկամներում:

Արյան մեջ միզանյութի մակարդակը կախված է սնման բնույթից, լյարդի սինթետիկ և երիկամների արտազատող ֆունկցիայից: Նրա հետ օրգանիզմից դուրս է բերվում միզանյութի ազոտը:

Որոշ դեպքերում օրգանիզմում կարող են կուտակվել ազոտ պարունակող միացություններ, այդ թվում՝ միզանյութ: Պաթոլոգիական վիճակը, որը զարգանում է, կոչվում է ուրեմիա: Միզանյութի ձևավորումը տեղի է ունենում լյարդում, որից այն արյան միջոցով տեղափոխվում է երիկամներ: Այնուհետև միզանյութը գտվում և հեռացվում է օրգանիզմից: Միզանյութն անընդհատ արտազատվում է օրգանիզմից, նորմալում արյան մեջ այս միացության մշտական կոնցենտրացիան պահպանվում է: Անալիզը հաճախ նշանակվում է այլ լաբորատոր թեստերի հետ միասին՝ տարբեր հիվանդությունների դեպքում երիկամների ֆունկցիան գնահատելու համար:

**Մեթոդ**՝ կինետիկ, ֆոտոմետրիկ

**Կենսասնմուշ**՝ Երակային արյուն (Clot-Activator)

### **Հետազոտության նախապայմանները**

- առավոտյան քաղցած՝ առնվազն 8 -12 ժ
- ջուրը՝ առօրյա կարգով
- նախօրեին խուսափել սննդային չարաշահումից
- բացառել սննդակարգից ճարպային մթերքներ թեստից 24 ժամ առաջ
- բացառել սննդակարգից ալկոհոլը թեստից 24 ժամ առաջ
- ԿՏ, մամոգրաֆիա և ճառագայթային հետազոտություններից պետք է անցնի 2-3 օր
- մինչև 1 տարեկան երեխաները նմուշառումից 30-40 րոպե առաջ չպետք է ուտեն
- 1-ից 5 տարեկան երեխաները՝ նմուշառումից 2-3 ժամ առաջ չպետք է ուտեն

**Իրականացման ժամանակացույց**

արդյունքը՝ տվյալ օրը 17:00

**Միզաթթու՝ զինը 1000 դրամ**

## Նկարագիր

Միզաթթուն սպիտակուցային փոխանակության վերջնական արդյունքներից է: Միզաթթվի մեծ մասը գտվում է երիկամներով և արտազատվում մեզով: Երբեմն մարդու օրգանիզմը չափազանց շատ միզաթթու է արտադրում կամ երիկամները ինչ-ինչ պատճառներով լավ չեն գտնում այն: Արյան մեջ միզաթթվի բարձր մակարդակը կապված է "հոդատապ" (պոդագրա) կոչվող հիվանդության հետ: Եթե արյան մեջ միզաթթու շատ քիչ է, դա կարող է լինել լյարդի կամ երիկամների հիվանդության ախտանիշ: Միզաթթվի ցածր մակարդակն ավելի քիչ է հանդիպում, քան բարձր մակարդակը:

**Մեթոդ`** Էնզիմատիկ, ֆոտոմետրիկ

**Կենսասնմուշ`** Երակային արյուն (Clot-Activator)

## Հետազոտության նախապայմանները

- առավոտյան քաղցած` առնվազն 8 -12 ժ
- ջուրը` առօրյա կարգով
- նախօրեին խուսափել սննդային չարաշահումից
- բացառել սննդակարգից ճարպային մթերքներ թեստից 24 ժամ առաջ
- բացառել սննդակարգից ալկոհոլը թեստից 24 ժամ առաջ
- ԿՏ, մամոգրաֆիա և ճառագայթային հետազոտություններից պետք է անցնի 2-3 օր
- մինչև 1 տարեկան երեխաները նմուշառումից 30-40 րոպե առաջ չպետք է ուտեն
- 1-ից 5 տարեկան երեխաները` նմուշառումից 2-3 ժամ առաջ չպետք է ուտեն

## Իրականացման ժամանակացույց

արդյունքը` տվյալ օրը 17:30:

**Խոլեստերին ընդհանուր գինը` 1000 դրամ**

## Նկարագիր

Խոլեստերինը (խոլեստերոլ) լյարդում սինթեզված ջրում չլուծվող պոլիցիկլային լիպոֆիլ սպիրտ է: Այն բջջային պատի մի մասն է և հանդիսանում է սեռական հորմոնների և լեղաթթուների սինթեզի աղբյուր: Խոլեստերինի փոխադրման ձևը տարբեր խտության լիպոպրոտեիններ են: Արյան մեջ խոլեստերինի մակարդակը կախված է լյարդում դրա սինթեզից, իսկ ավելի քիչ՝ սննդից ստացված ճարպերից: Այն լիպիդային նյութափոխանակության ամենակարևոր ցուցանիշներից է և օգտագործվում է որպես սքրինինգային թեստ, որը թույլ է տալիս ապագայում գնահատել աթերոսկլերոտիկ փոփոխությունների և անոթային խանգարումների ռիսկը:

**Մեթոդ՝** Էնզիմատիկ, կոլորիմետրիկ

**Կենսասնմուշ՝** Երակային արյուն (Clot-Activator)

### Հետազոտության նախապայմանները

- առավոտյան քաղցած՝ առնվազն 8 -12 ժ
- ջուրը՝ առօրյա կարգով
- նախօրեին խուսափել սննդային չարաշահումից
- բացառել սննդակարգից ճարպային մթերքներ թեստից 24 ժամ առաջ
- բացառել սննդակարգից ալկոհոլը թեստից 24 ժամ առաջ
- ԿՏ, մամոգրաֆիա և ճառագայթային հետազոտություններից պետք է անցնի 2-3 օր
- մինչև 1 տարեկան երեխաները նմուշառումից 30-40 րոպե առաջ չպետք է ուտեն
- 1-ից 5 տարեկան երեխաները՝ նմուշառումից 2-3 ժամ առաջ չպետք է ուտեն

### Իրականացման ժամանակացույց

տվյալ օրը 17:00:

Տրիգլիցերիդներ գինը՝ 1000 դրամ



Տրիգլիցերիդները ճարպեր են, օրգանիզմի բջիջների էներգիայի հիմնական աղբյուրներից մեկը: Դրանց մակարդակի բարձրացումը մեծացնում է սրտանոթային հիվանդությունների, ինչպես նաև սուր պանկրեատիտի զարգացման ռիսկը: Տրիգլիցերիդները ձևավորվում են ճարպային հյուսվածքում, աղիքներում և երիկամներում:

Տրիգլիցերիդներն արյան մեջ տեղափոխվում են սպիտակուցային միացությունների հետ մեկտեղ: Դրանք կոչվում են ցածր խտության լիպոպրոտեիններ: Տրիգլիցերիդների բարձր մակարդակը սովորաբար կապված է նույնքան ցածր խտության լիպոպրոտեինների բարձր մակարդակների հետ: Մեծ քանակությամբ երկու միացություններն էլ վտանգավոր են աթերոսկլերոզի, պանկրեատիտի զարգացման և այլ հյուսվածքների ու օրգանների աշխատանքի խաթարման համար:

**Մեթոդ՝** Էնզիմատիկ, կոլորիմետրիկ

**Կենսասանմուշ՝** Երակային արյուն Clot-Activator

### **Հետազոտության նախապայմանները**

- առավոտյան քաղցած՝ առնվազն 8 -12 ժ
- ջուրը՝ առօրյա կարգով
- նախօրեին խուսափել սննդային չարաշահումից
- բացառել սննդակարգից ճարպային մթերքները՝ թեստից 24 ժամ առաջ
- բացառել սննդակարգից ալկոհոլը՝ թեստից 24 ժամ առաջ
- ԿՏ, մամոգրաֆիա և ճառագայթային հետազոտություններից պետք է անցնի 2-3 օր
- մինչև 1 տարեկան երեխաները նմուշառումից 30-40 րոպե առաջ չպետք է ուտեն
- 1-5 տարեկան երեխաները նմուշառումից 2-3 ժամ առաջ չպետք է ուտեն

### **Իրականացման ժամանակացույց**

արդյունքը՝ տվյալ օրը 17:00:

**ՑԽ լիպոպրոտեիններ գինը՝ 2000 դրամ**

**Նկարագիր**

Ցածր խտության լիպոպրոտեինները (LDL) (այսպես կոչված, «վատ խոլեստերին») լիպոպրոտեիններ են, որոնք անոթային վնասվածքների առկայության դեպքում կուտակվում են անոթային պատում, ինչը հանգեցնում է աթերոսկլերոզի զարգացմանը: Ցածր խտության լիպոպրոտեինները օրգանիզմում խոլեստերինի հիմնական կրողներն են:

Նրանց մեջ պարունակվող խոլեստերինը համարվում է «վնասակար», քանի որ դրա ավելցուկը մեծացնում է զարկերակներում թիթեղների առաջացման վտանգը, ինչը կարող է հանգեցնել խցանման և ինֆարկտի կամ ինսուլտի պատճառ դառնալ: Խոլեստերինը չլուծվող նյութ է, այն կարող է տեղափոխվել ամբողջ օրգանիզմով միայն որպես սպիտակուցային միացությունների մաս (լիպոպրոտեիններ): Շատ դեպքերում այս թեստը նշանակվում է ոչ թե որպես անկախ հետազոտություն, այլև այլ թեստերի հետ համատեղ: Այն լիպիդային պրոֆիլի մի մասն է:

**Մեթոդ`** Էնզիմատիկ, կոլորիմետրիկ

**Կենսասանմուշ`** արյուն Clot-Activator

### **Հետազոտության նախապայմանները**

- առավոտյան քաղցած` առնվազն 8 -12 ժ
- ջուրը` առօրյա կարգով
- նախօրեին խուսափել սննդային չարաշահումից
- բացառել սննդակարգից ճարպային մթերքները` թեստից 24 ժամ առաջ
- բացառել սննդակարգից ալկոհոլը` թեստից 24 ժամ առաջ
- ԿՏ, մամոգրաֆիա և ճառագայթային հետազոտություններից պետք է անցնի 2-3 օր
- մինչև 1 տարեկան երեխաները նմուշառումից 30-40 րոպե առաջ չպետք է ուտեն
- 1-5 տարեկան երեխաները` նմուշառումից 2-3 ժամ առաջ չպետք է ուտեն

### **Իրականացման ժամանակացույց**

արդյունքը` տվյալ օրը 17:00:

**ԲՆ լիպոպրոտեիններ` 2000 դրամ**

**Նկարագիր**

Բարձր խտության լիպոպրոտեինները (HDL) միացություններ են, որոնք բաղկացած են լիպիդներից (ճարպերից) և սպիտակուցներից: Նրանք ապահովում են ճարպերի վերամշակումն ու հեռացումն օրգանիզմից, այդ պատճառով նրանց անվանում են "լավ խոլեստերին": HDL-ը կազմում է արյան ընդհանուր խոլեստերինի (խոլեստերոլի) մոտ 30%-ը: ԲԽ լիպոպրոտեինների անալիզն իրականացվում է պլանային պրոֆիլակտիկ զննման ժամանակ կամ ընդհանուր խոլեստերոլի բարձրացման դեպքում՝ որպես լիպիդային պրոֆիլի մաս:

**Մեթոդ՝** Էնզիմատիկ, կոլորիմետրիկ

**Կենսասնմուշ՝** Երակային արյուն Clot-Activator

### **Հետազոտության նախապայմանները**

- առավոտյան քաղցած՝ առնվազն 8 -12 ժ
- ջուրը՝ առօրյա կարգով
- նախօրեին խուսափել սննդային չարաշահումից
- բացառել սննդակարգից ճարպային մթերքները՝ թեստից 24 ժամ առաջ
- բացառել սննդակարգից ալկոհոլը՝ թեստից 24 ժամ առաջ
- ԿՏ, մամոգրաֆիա և ճառագայթային հետազոտություններից պետք է անցնի 2-3 օր
- մինչև 1 տարեկան երեխաները՝ նմուշառումից 30-40 րոպե առաջ չպետք է ուտեն
- 1-5 տարեկան երեխաները՝ նմուշառումից 2-3 ժամ առաջ չպետք է ուտեն

### **Իրականացման ժամանակացույց**

արդյունքը՝ տվյալ օրը 17:00:

**Ալֆա-Ամիլազ պանկրեատիկ 1000 դրամ**

**Նկարագիր**

Ալֆա-ամիլազ պանկրեատիկը ամիլազի տարատեսակներից մեկն է, որն արտադրվում է ենթաստամոքսային գեղձում և թքագեղձերում: Նրա ազդեցությունն ուղղված է աղիներում ածխաջրերի քայքայմանը: Նորմայում ամիլազը սինթեզվում է ենթաստամոքսային գեղձի բջիջների կողմից՝ նյութափոխանակության գործընթացների համար բավարար քանակությամբ:

Պանկրեատիկ ալֆա-ամիլազի արյան անալիզը նշանակում են ենթաստամոքսային գեղձի հիվանդությունների վերահսկողության, սակայն առավել հաճախ՝ պանկրեատիտի կասկածի դեպքում: Արյան մեջ ամիլազայի մակարդակից կարելի է դատել ախտահարման աստիճանի մասին: Օրինակ՝ քրոնիկ կամ դանդաղընթաց պանկրեատիտի դեպքում նորմայից բարձրացումը չնչին է լինում, այն դեպքում, երբ սուր վիճակում, բարդությունների առկայության դեպքում, ամիլազը կարող է նորմայից մի քանի անգամ բարձր լինել:

**Մեթոդ** կոլորիմետրիկ

**Կենսասնմուշ** Երակային արյուն Clot-Activator

### **Հետազոտության նախապայմանները**

- առավոտյան քաղցած՝ առնվազն 8 -12 ժ
- ջուրը՝ առօրյա կարգով
- նախօրեին խուսափել սննդային չարաշահումից
- բացառել սննդակարգից ճարպային մթերքները՝ թեստից 24 ժամ առաջ
- բացառել սննդակարգից ալկոհոլը՝ թեստից 24 ժամ առաջ
- ԿՏ, մամոգրաֆիա և ճառագայթային հետազոտություններից պետք է անցնի 2-3 օր
- մինչև 1 տարեկան երեխաները նմուշառումից 30-40 րոպե առաջ չպետք է ուտեն
- 1-5 տարեկան երեխաները՝ նմուշառումից 2-3 ժամ առաջ չպետք է ուտեն

**Իրականացման ժամանակացույց** արդյունքը՝ տվյալ օրը 17:00 :

**Դիաստազ 1000 դրամ**

## Նկարագիր

Դիաստազը թեստ է, որը ցույց է տալիս մարդու մեզի մեջ ամիլազի ֆերմենտի մակարդակը: Ամիլազը պատասխանատու է օսլայի և գլիկոգենի՝ գլյուկոզի տրոհման համար, և այդ գործընթացում թողարկված էներգիան օգտագործվում է օրգանիզմի կարիքների համար: Առանց ամիլազի բարդ ածխաջրեր օսլան և գլիկոգենը անհասանելի կլինեն օրգանիզմի համար՝ իրենց կառուցվածքի բարդության պատճառով:

Մեզի մեջ դիաստազի մակարդակի փոփոխությունը վկայում է մարսողական համակարգի և նյութափոխանակության հետ կապված խնդիրների մասին, այդ իսկ պատճառով հետազոտությունն առավել հաճախ նշանակում են գաստրոէնտերոլոգները, նեֆրոլոգները և էնդոկրինոլոգները, այն կարող է օգտակար լինել նաև վարակաբանների և վիրաբույժների համար:

## Մեթոդ կոլորիմետրիկ

## Կենսանմուշ մեզ

## Հետազոտության նախապայմանները

- նմուշառվում է 24 ժամվա մեզը ընդ որում՝ հավաքվում է ստերիլ տարայում՝ 1-ին օրվա առաջին մեզը բաց ենք թողնում, իսկ հաջորդ օրվա առաջին մեզն ավելացնում ենք ընդհանուրին, խառնում, դնում՝ սառնարան, տարայի վրա գրվում է ծավալը (մլ)
- նմուշառվում է մեզի ցանկացած բաժին

## Իրականացման ժամանակացույց

արդյունքը՝ տվյալ օրը 17:00:

## Ռևմատոիդ գործոններ

### Նկարագիր

Ռևմատոիդ գործոնը (RF) աուտոհակամարմիններ են, հիմնականում IgM խմբի (կարող են լինել նաև IgG, IgA, IgE և IgD ձևով), որոնք գրոհում են սեփական օրգանիզմի հակամարմինները: Ռևմատոիդ գործոնն ի սկզբանե օգտագործվել է ռևմատոիդ արթրիտի սերոպոզիտիվ (RF-ի առկայության դեպքում) և սերոնեգատիվ (դրաբացակայության դեպքում) ձևերի ախտորոշման համար: Նախկինում ենթադրվում էր, որ այս մարկերը ունիկալ է ռևմատոիդ արթրիտի համար, ինչի պատճառով էլ նրան տրվել է ռևմատոիդ գործոն անվանումը: Սակայն ավելի ուշ պարզ դարձավ, որ մի շարք այլ աուտոհիմուն հիվանդությունների դեպքում նաև արյան մեջ հայտնվում է ռևմատոիդ գործոնը: Ռևմատոիդ գործոնը նկատվում է նաև Շյոգրենի համախտանիշի և ինչպես բակտերիալ, այնպես էլ վիրուսային որոշ բորբոքումների դեպքում:

### Մեթոդ Իմունոտուրբիդիմետրիա

### Կենսասնմուշ Երակային արյուն Clot-Activator

### Հետազոտության նախապայմանները

- առավոտյան քաղցած՝ առնվազն 8 -12 ժ
- ջուրը՝ առօրյա կարգով
- նախօրեին խուսափել սննդային չարաշահումից
- բացառել սննդակարգից ճարպային մթերքները՝ թեստից 24 ժամ առաջ
- բացառել սննդակարգից ալկոհոլը՝ թեստից 24 ժամ առաջ
- ԿՏ, մամոգրաֆիա և ճառագայթային հետազոտություններից պետք է անցնի 2-3 օր
- մինչև 1 տարեկան երեխաները նմուշառումից 30-40 րոպե առաջ չպետք է ուտեն
- 1-5 տարեկան երեխաները նմուշառումից 2-3 ժամ առաջ չպետք է ուտեն

### Իրականացման ժամանակացույց

արդյունքը՝ տվյալ օրը 17:00:

## NT-proBNP - ուղեղի նատրիուրետիկ պեպտիդ **15000 դրամ**

### Նկարագիր

Ուղեղի նատրիուրետիկ պեպտիդը (NT-proBNP) արտադրվում է կարդիոմիոցիտների կողմից: Մասնակցում է ճարպային հյուսվածքի նյութափոխանակությանը, կարգավորում ջրա-էլեկտրոլիտային նյութափոխանակությունը: Կարևոր դեր է խաղում սրտային անբավարարության ախտորոշման գործում: Բացի այդ, NT-proBNP օգնությամբ կարելի է դատել սրտային անբավարարության ծանրության աստիճանի մասին, ինչպես նաև գնահատել բուժման արդյունավետությունը: BNP-ի մակարդակն աճում է ներանոթային արյան ծավալի և սրտի խոռոչներում ճնշման բարձրացմամբ:

### Մեթոդ ԻՔԼԱ (ICLA)

### Կենսասնմուշ Երակային արյուն (Clot-Activator)

**Հետազոտության նախապայմանները** թեստը նախապայմաններ չի պահանջում

### Իրականացման ժամանակացույց

արդյունքը՝ տվյալ օրը 17:00:

## Տրոպոնին T **7000 դրամ**

### Նկարագիր

Տրոպոնին T-ն սպիտակուց է, որը գտնվում է սրտի մկաններում և արյան մեջ արտազատվում սրտամկանի ինֆարկտի ժամանակ: Արյան մեջ տրոպոնին T-ի մակարդակը կարող է օգտագործվել սրտամկանի նեկրոզի չափսը գնահատելու համար:

Քանի որ տրոպոնին T-ի մակարդակը համարվում է կայուն և չի աճում նույնիսկ ավելորդ ֆիզիկական ծանրաբեռնվածության դեպքում, այս անալիզը համարվում է

շատ ճշգրիտ: Նաև այս անալիզը հաճախ օգտագործվում է որպես անգիոգրաֆիայի հավելում՝ թրոմբոլիտիկ թերապիայի գնահատման ժամանակ, քանի որ այն սրտամկանում մազանոթային շրջանառությունն ուսումնասիրելու առավել մատչելի մեթոդներից մեկն է: Կախված արդյունքերից՝ դրանք կարող են ցույց տալ ինչպես սրտամկանի ինֆարկտի ցածր, այնպես էլ նրա մեծ հավանականության կամ ընթացքի սուր փուլի մասին:

## **Մեթոդ** I-FLU (ICLA)

**Կենսանմուշ** Երակային արյուն Clot-Activator

**Հետազոտության նախապայմանները** թեստը նախապայմաններ չի պահանջում

## **Իրականացման ժամանակացույց**

պատասխանը՝ 1 ժամվա ընթացքում:

## **Ֆերիտին 6000 դրամ**

## **Նկարագիր**

Ֆերիտինը սպիտակուցային միացություն է, որի հիմնական գործառույթը երկաթի կուտակումն է: Հենց այս սպիտակուցի բաղադրության մեջ է երիթրոցիտների կողմից չօգտագործվող երկաթը կուտակվում և հանդիսանում որպես պահուստային: Այսպիսով, ֆերիտինի մակարդակով կարելի է գնահատել երկաթի հնարավոր պաշարը: Այն դեպքերում, երբ առաջանում է երկաթի պակաս, օրինակ, հեմոգլոբինի բաղադրության մեջ, փոխհատուցող մեխանիզմներն այն մատակարարում են ֆերիտինից: Եթե ֆերիտինի ցածր ցուցանիշը կախված է միայն արյան մեջ երկաթի պարունակությունից, ապա նրա բարձր ցուցանիշը կախված է մի շարք հիվանդություններից՝ լյարդի սուր և ճարպային հիվանդություններ, արյան վարակ, օնկոլոգիական հիվանդություններ, սիրտ-անոթային պաթոլոգիաներ, ինչպես նաև թոքերում և միզուղիներում սուր բորբոքային պրոցեսների, այրվածքների և տենդի ժամանակ:



**Մեթոդ** Իմունոտուրբիդիմետրիա

**Կենսասանմուշ** Երակային արյուն Clot-Activator

### **Հետազոտության նախապայմանները**

- առավոտյան քաղցած՝ առնվազն 8 -12 ժ
- ջուրը՝ առօրյա կարգով
- նախօրեին խուսափել սննդային չարաշահումից
- բացառել սննդակարգից ճարպային մթերքները՝ թեստից 24 ժամ առաջ
- բացառել սննդակարգից ալկոհոլը՝ թեստից 24 ժամ առաջ
- ԿՏ, մամոգրաֆիա և ճառագայթային հետազոտություններից պետք է անցնի 2-3 օր
- մինչև 1 տարեկան երեխաները նմուշառումից 30-40 րոպե առաջ չպետք է ուտեն
- 1-5 տարեկան երեխաները նմուշառումից 2-3 ժամ առաջ չպետք է ուտեն

### **Իրականացման ժամանակացույց**

արդյունքը՝ տվյալ օրը 17:00:

**Երկաթ 1500 դրամ**

### **Նկարագիր**

Երկաթն օրգանիզմի ամենակարևոր միկրոտարրերից մեկն է: Երկաթն օգտագործվում է էրիթրոցիտների ձևավորման մեջ և մտնում է մի շարք սպիտակուցների և ֆերմենտների բաղադրության մեջ: Այս թեստի ընթացքում որոշվում է արյան մեջ երկաթի քանակությունը, որը շրջանառվում է արյան հոսքում՝ սպիտակուցային միացության բաղադրության մեջ: Թեստը նշանակվում է նաև անեմիայի պատճառը պարզելու համար:

**Մեթոդ** կոլորիմետրիկ

**Կենսասանմուշ** Երակային արյուն Clot-Activator

## Հետազոտության նախապայմանները

- առավոտյան քաղցած՝ առնվազն 8 -12 ժ
- ջուրը՝ առօրյա կարգով
- նախօրեին խուսափել սննդային չարաշահումից
- բացառել սննդակարգից ճարպային մթերքները՝ թեստից 24 ժամ առաջ
- բացառել սննդակարգից ալկոհոլը՝ թեստից 24 ժամ առաջ
- ԿՏ, մամոգրաֆիա և ճառագայթային հետազոտություններից պետք է անցնի 2-3 օր
- մինչև 1 տարեկան երեխաները նմուշառումից 30-40 րոպե առաջ չպետք է ուտեն
- 1-5 տարեկան երեխաները՝ նմուշառումից 2-3 ժամ առաջ չպետք է ուտեն

## Իրականացման ժամանակացույց

արդյունքը՝ տվյալ օրը 17:00:

## C3 գործոն 3000 դրամ

### Նկարագիր

Կոմպլեմենտ համակարգը իմունային համակարգի մի մասն է, այն ապահովում է ոչ սպեցիֆիկ պաշտպանություն բակտերիաների և այլ պաթոգենների դեմ, որոնք մտնում են օրգանիզմ: Կոմպլեմենտի C3 բաղադրիչը համակարգի կենտրոնական բաղադրիչն է՝ բորբոքման սուր փուլի սպիտակուցը:

Այն ձևավորվում է լյարդում, մակրոֆագներում, ֆիբրոբլաստներում, լիմֆոիդ հյուսվածքներում և մաշկում: C3 գործոններն առաջացնում են հարթ մկանների կծկում, անոթային թափանցելիության բարձրացում և միջնորդանյութերի (մեդիատորների) հյուսվածքային և այլ բջիջների բորբոքման գործընթացին մասնակցող բջիջներից ազատում: Կարևոր դեր է խաղում աուտոհիմուն հիվանդությունների զարգացման գործում:

### Մեթոդ Իմունոտուրբիդիմերիա

### Կենսանմուշ Երակային արյուն Clot-Activator

## Հետազոտության նախապայմանները

- առավոտյան քաղցած՝ առնվազն 8 -12 ժ
- ջուրը՝ առօրյա կարգով
- նախօրեին խուսափել սննդային չարաշահումից
- բացառել սննդակարգից ճարպային մթերքները՝ թեստից 24 ժամ առաջ
- բացառել սննդակարգից ալկոհոլը՝ թեստից 24 ժամ առաջ
- ԿՏ, մամոգրաֆիա և ճառագայթային հետազոտություններից պետք է անցնի 2-3 օր
- մինչև 1 տարեկան երեխաները նմուշառումից 30-40 րոպե առաջ չպետք է ուտեն
- 1-5 տարեկան երեխաները՝ նմուշառումից 2-3 ժամ առաջ չպետք է ուտեն

## Իրականացման ժամանակացույց

Թեստի արդյունքը տրամադրվում է 3 աշխատանքային օրվա ընթացքում

## C4 գործոն 3000 դրամ

**Նկարագիր** Կոմպլեմենտ համակարգը հանդիսանում է իմուն համակարգի մաս, այն իրականացնում է բակտերիաներից և օրգանիզմ ներթափանցող պաթոգեններից ոչ սպեցիֆիկ պաշտպանություն: C4-ն աջակցում է ֆագոցիտոզին, մեծացնում է անոթային պատի թափանցելիությունը և մասնակցում է վիրուսների չեզոքացմանը: Արյան մեջ նրա նվազումը նկատվում է ակտիվ սպառման դեպքում՝ կապված կոմպլեմենտի համակարգի ակտիվացման դասական ուղով:

**Մեթոդ** Իմունոտուրբիդիմետրիա

**Կենսանմուշ** Երակային արյուն Clot-Activator

## Հետազոտության նախապայմանները

- առավոտյան քաղցած՝ առնվազն 8 -12 ժ
- ջուրը՝ առօրյա կարգով
- նախօրեին խուսափել սննդային չարաշահումից
- Բացառել սննդակարգից ճարպային մթերքները՝ թեստից 24 ժամ առաջ
- Բացառել սննդակարգից ալկոհոլը՝ թեստից 24 ժամ առաջ
- ԿՏ, մամոգրաֆիա և ճառագայթային հետազոտություններից պետք է անցնի 2-3 օր
- մինչև 1 տարեկան երեխաները նմուշառումից 30-40 րոպե առաջ չպետք է ուտեն
- 1-5 տարեկան երեխաները՝ նմուշառումից 2-3 ժամ առաջ չպետք է ուտեն

## Իրականացման ժամանակացույց

Թեստի արդյունքը տրամադրվում է 3 աշխատանքային օրվա ընթացքում:

## Հակա-Sm 7500 դրամ

**Նկարագիր** Anti-Sm (Smith) հատուկ է համակարգային կարմիր գայլախտին: Նրանք հազվադեպ են հայտնաբերվում շարակցական հյուսվածքի այլ համակարգային հիվանդությունների ժամանակ և հանդիսանում են համակարգային կարմիր գայլախտի ախտորոշման չափորոշիչներից մեկը:

## Մեթոդ ԻՖԱ

**Կենսանմուշ** երակային արյուն Clot-activatorM

## Հետազոտության նախապայմանները

- առավոտյան քաղցած՝ առնվազն 8 -12 ժ
- ջուրը՝ առօրյա կարգով
- նախօրեին խուսափել սննդային չարաշահումից
- Բացառել սննդակարգից ճարպային մթերքները՝ թեստից 24 ժամ առաջ

- Բացառել սննդակարգից ալկոհոլը՝ թեստից 24 ժամ առաջ
- ԿՏ, մամոգրաֆիա և ճառագայթային հետազոտություններից պետք է անցնի 2-3 օր
- մինչև 1 տարեկան երեխաները նմուշառումից 30-40 րոպե առաջ չպետք է ուտեն
- 1-5 տարեկան երեխաները՝ նմուշառումից 2-3 ժամ առաջ չպետք է ուտեն

## Իրականացման ժամանակացույց

Թեստի արդյունքը տրամադրվում է 3 աշխատանքային օրվա ընթացքում:

## Հակա-եպԴՆԹ-ի հակամարմիններ 7500 դրամ

### Նկարագիր

Anti-dsDNA հակամարմինները աուտոհակամարմիններ են, որոնք ուղղված են սեփական երկպարույր ԴՆԹ-ի դեմ, որոնք նկատվում են համակարգային կարմիր գայլախտի դեպքում: Հետազոտվում են այս հիվանդության ախտորոշման, ակտիվության գնահատման և բուժման վերահսկողության համար: Երբեմն Anti-dsDNA-ի աճը դիտվում է Շեգրենի սինդրոմի, սկլերոդերմիայի և ռևմատոիդ արթրիտի դեպքում և հազվադեպ լյարդի ինֆեկցիոն ախտահարման ժամանակ (հեպ B, C, CM, ինֆեկցիոն մոնոնուկլեոզ):

### Մեթոդ ԻՖԱ

**Կենսասնմուշ** երակային արյուն Clot-activatorM

### Հետազոտության նախապայմանները

- առավոտյան քաղցած՝ առնվազն 8 -12 ժ
- ջուրը՝ առօրյա կարգով
- նախօրեին խուսափել սննդային չարաշահումից
- Բացառել սննդակարգից ճարպային մթերքները՝ թեստից 24 ժամ առաջ
- Բացառել սննդակարգից ալկոհոլը՝ թեստից 24 ժամ առաջ
- ԿՏ, մամոգրաֆիա և ճառագայթային հետազոտություններից պետք է անցնի 2-3 օր

- մինչև 1 տարեկան երեխաները նմուշառումից 30-40 րոպե առաջ չպետք է ուտեն
- 1-5 տարեկան երեխաները՝ նմուշառումից 2-3 ժամ առաջ չպետք է ուտեն

## **Իրականացման ժամանակացույց**

Թեստի արդյունքը տրամադրվում է 3 աշխատանքային օրվա ընթացքում

## **Հականեյտրոֆիլային ցիտոպլազմային հակամարմիններ ANCA 7500 դրամ**

### **Նկարագիր**

Հականեյտրոֆիլային ցիտոպլազմային հակամարմինների (ANCA) անալիզը համապարփակ թեստ է, որն օգտագործվում է առաջնային համակարգային վասկուլիտի ախտորոշման համար: Հականեյտրոֆիլային ցիտոպլազմային հակամարմինները (ANCA) իրենցից ներկայացնում են հակաձինների դեմ աուտոհակամարմինների խումբ, որոնք տեղայնացված են նեյտրոֆիլների և մոնոցիտների ազուրոֆիլ և սպեցիֆիկ հատիկներում:

### **Մեթոդ ԻՖԱ**

### **Կենսանմուշ՝ սիճուկ**

### **Հետազոտության նախապայմանները**

- առավոտյան քաղցած՝ առնվազն 8 -12 ժ
- ջուրը՝ առօրյա կարգով
- նախօրեին խուսափել սննդային չարաշահումից
- բացառել սննդակարգից ճարպային մթերքները՝ թեստից 24 ժամ առաջ
- բացառել սննդակարգից ալկոհոլը՝ թեստից 24 ժամ առաջ
- ԿՏ, մամոգրաֆիա և ճառագայթային հետազոտություններից պետք է անցնի 2-3 օր
- մինչև 1 տարեկան երեխաները նմուշառումից 30-40 րոպե առաջ չպետք է ուտեն
- 1-5 տարեկան երեխաները՝ նմուշառումից 2-3 ժամ առաջ չպետք է ուտեն

## Իրականացման ժամանակացույց

Թեստի արդյունքը տրամադրվում է 3 աշխատանքային օրվա ընթացքում

## Թիրեոտրոպ հորմոն TSH 5000 դրամ

### Նկարագիր

TSH-ը հիպոֆիզի առաջային բլթի հորմոնն է, որը կարգավորում է T3 և T4 սեկրեցիան և խթանում է վահանաձև գեղձի ֆոլիկուլների զարգացումը: TSH-ի որոշումը վահանաձև գեղձի ֆունկցիան գնահատելու հիմնական թեստ է: Թիրեոտրոպ հորմոնը առավել զգայուն հորմոնն է, որի մակարդակը վահանագեղձի խանգարումների դեպքում փոփոխվում է ավելի շուտ, քան մյուսները, այդ պատճառով ԹՏՀ արյան անալիզը պարտադիր մտնում է վահանագեղձի գործառույթի ցանկացած լաբորատոր հետազոտության մեջ: Թիրեոտրոպ հորմոնը (Թիրեոտրոպին, TSH) սինթեզվում է հիպոֆիզի կողմից: Այս հորմոնն անհրաժեշտ է օրգանիզմի կենսագործունեության համար, քանի որ կարգավորում է վահանաձև գեղձի աշխատանքը:

TSH-ը պատասխանատու է վահանաձև գեղձի հորմոնների մշտական մակարդակի պահպանման համար: Եթե նրանց մակարդակը դառնում է չափազանց ցածր, հիպոթալամուսն ազատում է TSH-ի սինթեզը ակտիվացնող հորմոնը: Վահանաձև գեղձի հորմոնի մակարդակի շեղումը նորմալից ամենից հաճախ վկայում է վահանաձև գեղձի ֆունկցիայի կարգավորման խանգարումների մասին, սակայն դրանց պատճառները ճշգրիտ որոշելու համար շատ դեպքերում անհրաժեշտ է լրացուցիչ հետազոտություններ: TSH-ի արդյունքների հիման վրա նորածինների մոտ ախտորոշվում է վահանաձև գեղձի ֆունկցիայի խանգարում, իսկ կանանց մոտ՝ անպտղություն: Անալիզը նշանակվում է նաև որոշակի պարբերականությամբ բուժման առաջընթացը վերահսկելու համար:

Արյան մեջ TSH-ի ցուցանիշը ավելի բարձր է գիշերը ժամը 02:00-04:00-ի հատվածում, իսկ առավոտյան այն մի փոքր նվազում է: Ժամը 17:00-19:00 մինիմումի է հասնում: Եթե գիշերը ավելի ակտիվ կենսակերպով են ապրում, նորմալ ռիթմը խանգարվում է, TSH - ը կարող է և բարձր, և ցածր ցուցանիշ ունենալ օրգանիզմում: TSH-ը նաև ցածր

ցուցանիշ է գրանցում հղիության, հիվանդությունների ժամանակ, իսկ լավացման շրջանում բարձրանում է:

**Մեթոդ** ԻՔԼԱ (ICLA)

**Կենսանմուշ** Երակային արյուն Clot-Activator

### **Հետազոտության նախապայմանները**

- բացառել սննդակարգից ճարպային մթերքները՝ թեստից 24 ժամ առաջ
- բացառել սննդակարգից ալկոհոլը՝ թեստից 24 ժամ առաջ
- նախընտրելի է հանձնել անոթի կամ 3-4 ժամ կերած չլինել թեստից առաջ
- բացառել ծխախոտի օգտագործումը 1-2 ժամ
- խուսափել էմոցիոնիալ և ֆիզիկական ծանրաբեռնվածությունից թեստից 24 ժամ առաջ

### **Իրականացման ժամանակացույց**

արդյունքը՝ տվյալ օրը 17:00:

**T3 ազատ 5000 դրամ**

### **Նկարագիր**

T3 ազատը տրիյոդոթիրոնինի (ընդհանուր T3) կենսաբանորեն ակտիվ ձև է, որը կապված չէ տրանսպորտային սպիտակուցների հետ: Կարգավորում է էներգետիկ և պլաստիկ փոխանակությունը օրգանիզմում: Տրիյոդոթիրոնինը վահանաձև գեղձի հորմոններից է: Այս հորմոնը կարգավորում է հյուսվածքների աճը, սպիտակուցների, ածխաջրերի, լիպիդների և կալցիումի փոխանակությունը: Նաև այն պատասխանատու է օրգանիզմի մարսողական, սրտանոթային, նյարդային, վերարտադրողական և շնչառական համակարգերի գործունեության կարգավորման համար: Ազատ T3-ի արյան անալիզի արդյունքներն օգտագործվում են վահանաձև գեղձի ֆունկցիայի գնահատման և հիպերթիրեոզի ախտորոշումը հաստատելու կամ բացառելու համար: Հիպերթիրեոզով ախտորոշված հիվանդների համար անալիզը նշանակվում է որոշակի



պարբերականությամբ՝ բուժման ընթացքը վերահսկելու և դրա արդյունավետությունը գնահատելու համար:

**Մեթոդ** ԻՔԼԱ (ICLA)

**Կենսամուշ** Երակային արյուն Clot-Activator

### **Հետազոտության նախապայմանները**

- բացառել սննդակարգից ճարպային մթերքները թեստից 24 ժամ առաջ
- բացառել սննդակարգից ալկոհոլը թեստից 24 ժամ առաջ
- նախընտրելի է հանձնել անոթի կամ 3-4 ժամ կերած չլինել թեստից առաջ
- բացառել ծխախոտի օգտագործումը 1-2 ժամ
- խուսափել էմոցիոնիալ և ֆիզիկական ծանրաբեռնվածությունից թեստից 24 ժամ առաջ
- համաձայնեցնել նշանակող բժշկի հետ՝ վահանաձև գեղձի հորմոնը հանձնելուց առաջ ընդունել, թե ոչ

### **Իրականացման ժամանակացույց**

արդյունքը՝ տվյալ օրը 17:00:

### **T3 ընդհանուր 5000 դրամ**

### **Նկարագիր**

Տրիյոդոթիրոնինը (T3 ընդհանուր) վահանաձև գեղձի հորմոն է, որն անհրաժեշտ է էներգետիկ և պլաստիկ փոխանակության կարգավորման համար: T3-ի միայն մի փոքր մասն է արտադրվում վահանաձև գեղձում և ունի երկու ձև՝ ազատ և սպիտակուցների հետ կապված: Ընդհանուր T3-ի արյան անալիզը արտացոլում է ազատ և կապված T3-ի ընդհանուր քանակը: T3-ի գործունեության շրջանակն ընդարձակ է: Այն ազդում է սպիտակուցների ձևավորման և ճարպերի քայքայման վրա, կարգավորում է գլյուկոզի և վիտամին A-ի սինթեզը: Աղիների աշխատանքը և ոսկրերի վիճակը նույնպես

կապված են T3-ի գործողության հետ: Երեխաների մոտ հորմոնը նպաստում է նյարդային համակարգի աշխատանքին՝ ազդելով նրա աճի և զարգացման վրա:

## **Մեթոդ** ԻՔԼԱ (ICLA)

**Կենսանմուշ** Երակային արյուն Clot-Activator

### **Հետազոտության նախապայմանները**

- բացառել սննդակարգից ճարպային մթերքները թեստից 24 ժամ առաջ
- բացառել սննդակարգից ակոհոլը թեստից 24 ժամ առաջ
- նախընտրելի է հանձնել անոթի կամ 3-4 ժամ կերած չլինել թեստից առաջ
- բացառել ծխախոտի օգտագործումը 1-2 ժամ
- խուսափել էմոցիոնիալ և ֆիզիկական ծանրաբեռնվածությունից թեստից 24 ժամ առաջ
- համաձայնեցնել նշանակող բժշկի հետ՝ վահանաձև գեղձի հորմոնը հանձնելուց առաջ ընդունել, թե ոչ

### **Իրականացման ժամանակացույց**

արդյունքը՝ տվյալ օրը 17:00:

## **T4 ազատ 5000 դրամ**

### **Նկարագիր**

Ազատ T4-ը ընդհանուր թիրոքսինի կենսաբանորեն ակտիվ մասն է, որը կարևոր դեր է խաղում նյութափոխանակության մեջ: Արագացնում է հիմնական նյութափոխանակությունը և պերիֆերիկ հյուսվածքների կողմից թթվածնի սպառումը: Բարձրացնում է ջերմարտադրությունը: Հանդիսանում է հիմնական թեստ, որը նշանակվում է վահանաձև գեղձի գործառույթները հետազոտելու համար: Ազատ T4-ի մակարդակը հնարավորություն է տալիս ավելի ճշգրիտ գնահատել վահանաձև գեղձի վիճակը, ուստի նախընտրելի է այդ նպատակով նշանակել ազատ T4 ֆրակցիան: Ազատ

T4-ի բարձր մակարդակը նկատվում է թիրեոտոքսիկոզի, հիպերթիրեոզի, մի շարք դեղամիջոցներ ընդունելու և համակարգային հիվանդությունների ժամանակ: Ազատ T4-ի նվազեցված մակարդակը նկատվում է հիպոթիրեոզի և յոդի անբավարարության դեպքում: Խորհուրդ է տրվում ազատ T4 արյան անալիզ նշանակել վահանաձև գեղձի այլ հորմոնների հետ համատեղ:

**Մեթոդ** ԻՔԼԱ (ICLA)

**Կենսանմուշ** Երակային արյուն Clot-Activator

### **Հետազոտության նախապայմանները**

- բացառել սննդակարգից ճարպային մթերքները թեստից 24 ժամ առաջ
- բացառել սննդակարգից ալկոհոլը թեստից 24 ժամ առաջ
- նախընտրելի է հանձնել անոթի կամ 3-4 ժամ կերած չլինել թեստից առաջ
- բացառել ծխախոտի օգտագործումը 1-2 ժամ
- խուսափել էմոցիոնիալ և ֆիզիկական ծանրաբեռնվածությունից թեստից 24ժ առաջ
- համաձայնեցնել նշանակող բժշկի հետ՝ վահանաձև գեղձի հորմոնը հանձնելուց առաջ ընդունել, թե ոչ

### **Իրականացման ժամանակացույց**

արդյունքը՝ տվյալ օրը 17:00:

### **T4 ընդհանուր 5000 դրամ**

### **Նկարագիր**

Թիրոքսինը (T4 ընդհանուր) տրիյոդոթիրոնինի (T3) պրոհորմոն է, որն արտադրվում է վահանաձև գեղձում: Կենսաբանական ակտիվությունը մոտավորապես 5 անգամ պակաս է T3-ից: Արագացնում է հիմնական նյութափոխանակությունը և պերիֆերիկ հյուսվածքների կողմից թթվածնի սպառումը: Բարձրացնում է ջերմարտադրությունը: Հանդիսանում է հիմնական թեստ, որը նշանակվում է վահանաձև գեղձի գործառույթները հետազոտելու համար:

**Մեթոդ** ԻՔԼԱ (ICLA)

**Կենսասնմուշ** Երակային արյուն Clot-Activator

### **Հետազոտության նախապայմանները**

- բացառել սննդակարգից ճարպային մթերքները թեստից 24 ժամ առաջ
- բացառել սննդակարգից ալկոհոլը թեստից 24 ժամ առաջ
- նախընտրելի է հանձնել անոթի կամ 3-4 ժամ կերած չլինել թեստից առաջ
- բացառել ծխախոտի օգտագործումը 1-2 ժամ
- խուսափել էմոցիոնիալ և ֆիզիկական ծանրաբեռնվածությունից թեստից 24 ժամ առաջ
- համաձայնեցնել նշանակող բժիշկի հետ՝ վահանաձև գեղձի հորմոնը հանձնելուց առաջ ընդունել, թե ոչ

### **Իրականացման ժամանակացույց**

արդյունքը՝ տվյալ օրը 17:00:

**ԹՏՀ-ռեցեպտորի հակամարմիններ (Anti-rTSH) 12000 դրամ**

### **Նկարագիր**

ԹՏՀ-ռեցեպտորի հակամարմինները (Anti-rTSH) աուտոհակամարմինների կոմպլեքս է, որն արտադրվում է հիպերթիրեոիդային վիճակներում թիրեոտրոպ հորմոնի ռեցեպտորների համար (դիֆուզ տոքսիկ խալիպ, Գրեյվսի հիվանդություն, աուտոիմուն թիրեոիդիտ): Հնարավոր է նաև հայտնաբերել Anti-rTSH ենթասուր թիրեոիդիտի, Հաշիմիտոյի հիվանդության ժամանակ և վահանաձև գեղձի գործառույթների տրանզիտորային խանգարումներով նորածիններ մոտ, որոնց մայրերի մոտ հիպերթիրեոիդ վիճակներ կան:

**Մեթոդ** ԻՔԼԱ (ICLA)

**Կենսասնմուշ** Երակային արյուն Clot-Activator

## Հետազոտության նախապայմանները

- բացառել սննդակարգից ճարպային մթերքները՝ թեստից 24 ժամ առաջ
- բացառել սննդակարգից ալկոհոլը՝ թեստից 24 ժամ առաջ

## Իրականացման ժամանակացույց

արդյունքը՝ տվյալ օրը 17:00:

## Թիրեոգլոբուլին (TG) 8000 դրամ

### Նկարագիր

Թիրեոգլոբուլինը (TG) գլիկոպրոտեին է, վահանաձև գեղձի պրոհորմոն: Այն օգտագործվում է վահանաձև գեղձի պապիլյար և ֆոլիկուլյար քաղցկեղով հիվանդների դինամիկ վերահսկողության համար: Այն համարվում է այս ուռուցքների կրկնության մարկեր: Հաշվի առնելով, որ TG-ն մասնակցում է T4-ի և T3-ի սինթեզին, իսկ TG-ի սինթեզն ինքնին գտնվում է TSH-ի հսկողության տակ, խորհուրդ է տրվում որոշել այդ հորմոնների համալիրը, ինչպես նաև թիրեոգլոբուլինի և թիրեոպերօքսիդազի նկատմամբ հակամարմինները:

**Մեթոդ** ԻՔԼԱ (ICLA)

**Կենսամուշ** Երակային արյուն Clot-Activator

## Հետազոտության նախապայմանները

- Բացառել սննդակարգից ճարպային մթերքները՝ թեստից 24 ժամ առաջ
- Բացառել սննդակարգից ալկոհոլը՝ թեստից 24 ժամ առաջ
- Նախընտրելի է հանձնել անոթի կամ 3-4 ժամ կերած չլինել թեստից առաջ
- Բացառել ծխախոտի օգտագործումը 1-2 ժամ
- Խուսափել էմոցիոնիալ և ֆիզիկական ծանրաբեռնվածությունից թեստից 24 ժամ առաջ
- համաձայնեցնել նշանակող բժշկի հետ՝ վահանաձև գեղձի հորմոնը հանձնելուց առաջ ընդունել, թե ոչ

## Իրականացման ժամանակացույց

արդյունքը՝ տվյալ օրը 17:00:

## Թիրեոգլոբուլինի հակամարմիններ (Anti-TG) 6000 դրամ

### Նկարագիր

Թիրեոգլոբուլինը սպիտակուց է, որից արտադրվում են վահանաձև գեղձի հիմնական հորմոնները (Թիրոքսին, T4 և Տրիյոդոթիրոնին, T3): Նորմալում թիրեոգլոբուլինը չի մտնում արյան հոսք, դա հանարավոր է միայն աուտոիմուն բորբոքումների, ուռուցքի մեծացման, արյունազեղումների դեպքում՝ վահանազեղձի բջիջներում դեստրուկտիվ գործընթացների ժամանակ: Այս դեպքում թիրոգլոբուլինի նկատմամբ արտադրվում են հակամարմիններ (Anti-TG): Anti-TG-ի կոնցենտրացիան կարող է աճել Գրեյվսի հիվանդության ժամանակ (հիվանդների մոտ 50%): Anti-TG-ի քանակի չափավոր աճը հաճախ հայտնաբերվում է այլ աուտոիմուն հիվանդությունների (կոլագենոզներ, ռևմատոիդ արթրիտ, համակարգային կարմիր գայլախտ և այլն), քրոմոսոմային խանգարումների ժամանակ (Տերների համախտանիշ, Դաունի համախտանիշ): Հազվադեպ Anti-TG-ն նկատվում է առողջ մարդկանց մոտ: Տարբեր լաբորատոր մեթոդների կիրառմամբ արյան մեջ Anti-TG-ի հայտնաբերման արդյունքները կարող են զգալիորեն տարբերվել:

Մեթոդ ԻՔԼԱ (ICLA)

## Կենսանմուշ Երակային արյուն Clot-Activator

### Հետազոտության նախապայմանները

- բացառել սննդակարգից ճարպային մթերքները՝ թեստից 24 ժամ առաջ
- բացառել սննդակարգից ալկոհոլը՝ թեստից 24 ժամ առաջ

### Իրականացման ժամանակացույց

արդյունքը՝ տվյալ օրը 17:00:

### Թիրեոպերօքսիդազի հակամարմիններ (Anti-TPO) 6000 դրամ

### Նկարագիր

Թիրեոպերօքսիդազը ֆերմենտ է, որը գտնվում է վահանաձև գեղձի ֆոլիկուլային բջիջներում: Վահանաձև գեղձի աուտոիմուն հիվանդությունների դեպքում օրգանիզմն արտադրում է հատուկ հակամարմիններ թիրեոպերօքսիդազի նկատմամբ (Anti-TPO): Դրա հետ կապված, Anti-TPO-ն օգտագործվում է աուտոիմուն թիրեոիդիտի ախտորոշման համար: Նման հակամարմինների արտադրությունը սկսվում է, եթե օրգանիզմի իմուն համակարգը սեփական վահանաձև գեղձի հյուսվածքի վրա արձագանքում է որպես օտար նյութ: Հակամարմինները կարող են վնասել գեղձը, առաջացնել նրա գործառույթների խանգարում և թիրեոիդիտի առաջացում: Տվյալ հետազոտությունն օգտագործվում է՝ հաստատելու կամ հերքելու վահանաձև գեղձի հիվանդությունների աուտոիմուն բնույթը: Նաև նրա արդյունքների հիման վրա ընտրվում է օպտիմալ թերապիա:

### Մեթոդ ԻՔԼԱ (ICLA)

## Կենսանմուշ Երակային արյուն Clot-Activator

### Հետազոտության նախապայմանները

- բացառել սննդակարգից ճարպային մթերքները՝ թեստից 24 ժամ առաջ
- բացառել սննդակարգից ալկոհոլը՝ թեստից 24 ժամ առաջ

## Իրականացման ժամանակացույց

արդյունքը՝ տվյալ օրը 17:00:

## Պարատհորմոն (PTH) 8000 դրամ

### Նկարագիր

Պարաթիրեոիդ հորմոնը կամ պարատհորմոնը (PTH) արտադրվում է հարվահանագեղձերի կողմից, որոնք իրենցից ներկայացնում են վահանաձև գեղձին կից թերթիկաձև կառուցվածքներ: Հարվահանաձև գեղձերի հիմնական գործառույթը պարատհորմոնի սինթեզն է: Այս նյութը անփոխարինելի է արյան և ոսկորների կալցիումի և ֆոսֆորի պատշաճ փոխանակման համար: Այսպես, պարատհորմոնը նպաստում է արյան շիճուկում կալցիումի բարձրացմանը: Հարվահանաձև գեղձերի կողմից պարատհորմոնի արտադրության ավելացմամբ նկատվում է հիպերկալցեմիա և հիպոֆոսֆատեմիա: Արյան մեջ նկատվում է կալցիումի բարձր մակարդակ, այն ժամանակ, երբ ոսկրերում որոշվում է նրա պակասը, ինչի հետևանքով զարգանում է օստեոպորոզ: Միաժամանակ, անոթներում մեծանում է կալցիումի կուտակումը, ինչը հանգեցնում է դրանց կալցիֆիկացմանը, խաթարվում է աղիների պատերի անցանելիությունը: Պարատհորմոնի պակասը հանգեցնում է նաև տարբեր օրգանների աշխատանքի փոփոխության: Ամենից հաճախ, պարատհորմոնը որոշվում է նյութափոխանակության հիմնական մասնակիցների հետ միասին, մասնավորապես, միաժամանակ հետազոտվում են կալցիտոնինի, կալցիումի և ֆոսֆորի մակարդակները և վիտամին D-ն: Դա օգնում է ավելի ճշգրիտ որոշել խանգարումների մակարդակը և բացառել նմանատիպ այլ հիվանդությունները:

**Մեթոդ** ԻՔԼԱ (ICLA)



## Կենսանմուշ Երակային արյուն Clot-Activator

### Հետազոտության նախապայմանները

- բացառել սննդակարգից ճարպային մթերքները՝ թեստից 24 ժամ առաջ
- բացառել սննդակարգից ալկոհոլը՝ թեստից 24 ժամ առաջ

### Իրականացման ժամանակացույց

արդյունքը՝ տվյալ օրը 17:00:

### Տեստուտերոն 5000 դրամ

### Նկարագիր

Տեստուտերոնը հիմնական արական հորմոնն է (անդրոգեն): Մինթեզվում է տղամարդկանց ամորձիներում խոլեստերինից, կանանց մոտ՝ ձվարաններում և մակերիկամների կեղևում: Տեստուտերոնն ապահովում է առաջնային և երկրորդային սեռական հատկանիշների ձևավորումը և սեռական օրգանների զարգացումը, կարգավորում է սպերմատոգենեզը տղամարդկանց մոտ, երկու սեռերի լիբիդոն և սեռական վարքագիծը կախված են նրա մակարդակից: Տեստուտերոնի սինթեզը և սեկրեցիան կարգավորվում են հիպոֆիզային գեղձի գոնադոտրոպ հորմոններով: Տեստուտերոնի կոնցենտրացիան փոխվում է կախված օրվա ժամից: Առավոտյան այն առավելագույնն է, իսկ օրվա ընթացքում հորմոնի կոնցենտրացիան աստիճանաբար նվազում է: Տարիքի հետ տեստուտերոնի սինթեզը նվազում է: Սա բնական գործընթաց է: Տարբեր տարիքային կատեգորիաների համար սահմանված են այս հորմոնի իրենց չափանիշները: Հետազոտության արդյունքները մեկնաբանելիս բժիշկը հաշվի է առնում հիվանդի տարիքը և սեռը, ինչպես նաև մի շարք այլ գործոններ:

### Մեթոդ ԻՔԼԱ (ICLA)

## Կենսանմուշ Երակային արյուն Clot-Activator

## Հետազոտության նախապայմանները

- Բացառել սննդակարգից ճարպային մթերքները՝ թեստից 24 ժամ առաջ
- Բացառել սննդակարգից ալկոհոլը՝ թեստից 24 ժամ առաջ
- նախընտրելի է հանձնել անոթի կամ 3-4 ժամ կերած չլինել թեստից առաջ
- խուսափել էմոցիոնիալ և ֆիզիկական ծանրաբեռնվածությունից թեստից 24 ժամ առաջ
- նշանակող բժշկի հետ համաձայնեցնել, թե դաշտանային ցիկլի որերորդ օրը հանձնել

## Իրականացման ժամանակացույց

արդյունքը՝ տվյալ օրը 17:00:

## Էստրադիոլ 6000 դրամ

## Նկարագիր

Էստրադիոլը կանանց օրգանիզմի հիմնական էստրոգենն է: Ձևավորվում է ձվարաններում (տղամարդկանց մոտ՝ ամորձիներում) և մակերիկամի կեղևում: Էստրադիոլն ապահովում է կանանց առաջնային և երկրորդային սեռական հատկանիշների զարգացումը, ապահովում է կանացի օրգանիզմի բնականոն գործունեությունը: Այն նաև ապահովում է մաշկի առաձգականությունը, մազերի առողջ տեսքը և կանխում է կալցիումի հեռացումն օրգանիզմից: Էստրադիոլի մակարդակը փոխվում է դաշտանային ցիկլի ընթացքում. գագաթնակետը հասնում է մինչև օվուլյացիան, այնուհետև նրա մակարդակը զգալիորեն նվազում է:

## Մեթոդ ԻՔԼԱ (ICLA)

Կենսանմուշ Երակային արյուն Clot-Activator

## Հետազոտության նախապայմանները

- բացառել սննդակարգից ճարպային մթերքները՝ թեստից 24 ժամ առաջ
- բացառել սննդակարգից ակոհոլը՝ թեստից 24 ժամ առաջ
- նախընտրելի է հանձնել անոթի կամ 3-4 ժամ կերած չլինել թեստից առաջ
- խուսափել էմոցիոնիալ և ֆիզիկական ծանրաբեռնվածությունից թեստից 24 ժամ առաջ
- նշանակող բժշկի հետ համաձայնեցնել, թե դաշտանային ցիկլի որերորդ օրը հանձնել

## Իրականացման ժամանակացույց

արդյունքը՝ տվյալ օրը 17:00:

## Հակա-HBc IgG+IgM (Anti-HB-core IgM, IgG) 6000 դրամ

### Նկարագիր

Հեպատիտ B վիրուսի HB-core հակաձինը վիրուսի ներքին սպիտակուցն է: Հեպատիտ B վիրուսի HB-core հակաձնի հակամարմինները (Anti-HB-core IgM, IgG) հետազոտություն է, որն իրականացվում է HB-core IgM, IgG հակամարմինների հայտնաբերման համար, ինչը ցույց է տալիս հեպատիտ B վիրուսի ակտիվ բազմացումն օրգանիզմում:

Հեպատիտ B վիրուսի HB-core հակաձնի IgM դասի հակամարմիններն արյան մեջ հայտնաբերվում են սուր հեպատիտի ախտանիշների հետ միաժամանակ, այսինքն՝ շիճուկում HBs հակաձնի սինթեզից հետո, բայց մինչև հակա-HBs հակամարմինների հայտնաբերումը: HB-core IgM-ը հանդիսանում է հեպատիտ B-ի սուր վարակի մարկեր: Հեպատիտ B վիրուսի HB-core հակաձնի IgG դասի հակամարմինները հայտնաբերվում են HB-core IgM-ից հետո և արտադրվում են երկար ժամանակ, հաճախ ամբողջ կյանքի ընթացքում: HB-core IgG-ն քրոնիկ կամ անցյալում տարած հեպատիտ B-ի մարկեր է:

**Մեթոդ** ԻՔԼԱ (ICLA)

**Կենսանմուշ** Երակային արյուն Clot-Activator

## Հետազոտության նախապայմանները

- բացառել սննդակարգից ճարպային մթերքները՝ թեստից 24 ժամ առաջ
- բացառել սննդակարգից ալկոհոլը՝ թեստից 24 ժամ առաջ

## Իրականացման ժամանակացույց

արդյունքը՝ տվյալ օրը 17:00:

## Հակա-HBs (Anti-HBs) 6000 դրամ

### Նկարագիր

Վիրուսային հեպատիտ B-ն վարակիչ անթրոպոնոզ հիվանդություն է, որն առաջանում է ԴՆԹ պարունակող հեպատիտ B վիրուսով: Փոխանցման ճանապարհը հիմնականում պարենտերալ է: Վարակման աղբյուրը հիվանդն է կամ վիրուսի կրողը: Վիրուսն ունի բարդ կառուցվածք: Հիմնական հակաձինը HBsAg-ն է՝ վիրուսի մակերեսային հակաձինն է:

HBV-ի մակերեսային հակաձնի հակամարմինները (Anti-HBs) հանդիսանում են նախկինում տարած հեպատիտ B-ի կամ հետպատվաստումային իմունիտետի ցուցիչ: Anti-HBs հակամարմինները սկսում են հայտնվել արյան մեջ վարակվելուց 4-12 շաբաթ անց, բայց անմիջապես կապվում են HBsAg-ի հետ, ուստի դրանք սահմանելի քանակով կարող են հայտնաբերվել միայն HBsAg-ի անհետացումից հետո:

### Մեթոդ ԻՔԼԱ (ICLA)

### Կենսանմուշ արյուն Clot-Activator

## Հետազոտության նախապայմանները

- բացառել սննդակարգից ճարպային մթերքները՝ թեստից 24 ժամ առաջ
- բացառել սննդակարգից ալկոհոլը՝ թեստից 24 ժամ առաջ

## Իրականացման ժամանակացույց

Թեստը մինչև ժամը 14:00 հանձնելու դեպքում, արդյունքը՝ տվյալ օրը 17:00:

14:00-ից հետո՝ հաջորդ օրը:

## **Հեպատիտ C հակամարմիններ (Anti-HCV IgM+IgG) 4000 դրամ**

### **Նկարագիր**

Anti-HCV-ն IgM և IgG դասերի հեպատիտ C վիրուսի սպիտակուցների նկատմամբ սպեցիֆիկ իմունոգլոբուլիններ են, ոռոնք վկայում են հնարավոր վարակման կամ նախկինում տարած վարակի մասին: Հեպատիտ C վիրուսի սպիտակուցների նկատմամբ IgM և IgG դասերի սպեցիֆիկ իմունոգլոբուլինների հետազոտությունը HCVAg-ի առկայության դեպքում ցույց կտա, թե վարակի ո՞ր փուլն է: Սուր փուլում և երբ հարուցիչը վերաակտիվանում է, գերակշռում են M հակամարմինները, իսկ քրոնիկական վարակների և ամբողջական վերականգնման դեպքում՝ G հակամարմինները:

**Մեթոդ** ԻՔԼԱ (ICLA)

**Կենսասնմուշ** Երակային արյուն Clot-Activator

### **Հետազոտության նախապայմանները**

- բացառել սննդակարգից ճարպային մթերքները՝ թեստից 24 ժամ առաջ
- բացառել սննդակարգից ալկոհոլը՝ թեստից 24 ժամ առաջ

### **Իրականացման ժամանակացույց**

Թեստը մինչև ժամը 14:00 հանձնելու դեպքում, արդյունքը՝ տվյալ օրը 17:00:

14:00-ից հետո՝ հաջորդ օրը:

## **Հեպ. B մակերեսային հակաձին (HBsAg) 4000 դրամ**

### **Նկարագիր**

Վիրուսային հեպատիտ B-ն վարակիչ անթրոպոնոզ հիվանդություն է, որն առաջանում է ԴՆԹ պարունակող հեպատիտ B վիրուսով: Փոխանցման ճանապարհը հիմնականում պարենտերալ է: Վարակման աղբյուրը հիվանդն է կամ վիրուսի կրողը: HBsAg մակերեսային հակաձնի հետազոտությունը հեպատիտ B վիրուսի ախտորոշման հիմնական թեստն է: Այն պետք է իրականացվի պարենտերալ վիրուսային հեպատիտով վարակման բարձր ռիսկի խմբում գտնվող հիվանդների մոտ՝ արյան և նրա բաղադրիչների, օրգանների և հյուսվածքների ռեցիպիենտներ, հղիներ, բուժանձնակազմ, պլանային վիրաբուժական միջամտությունից առաջ հիվանդներ, կոնտակտային անձիք:

### **Մեթոդ ԻՔԼԱ (ICLA)**

### **Կենսասնումուշ** Երակային արյուն (Clot-Activator)

### **Հետազոտության նախապայմանները**

- բացառել սննդակարգից ճարպային մթերքները թեստից 24 ժամ առաջ
- բացառել սննդակարգից ալկոհոլը թեստից 24 ժամ առաջ

### **Իրականացման ժամանակացույց**

Թեստը մինչև ժամը 14:00-ը հանձնելու դեպքում, արդյունքը՝ տվյալ օրը 17:00: 14:00-ից հետո՝ հաջորդ օրը:

### **ՄԻԱՎ (HIV) 4000 դրամ**

### **Նկարագիր**

ՄԻԱՎ-ը (մարդու իմունային անբավարարության վիրուսը) ռետրովիրուս է, որն առաջացնում է վարակիչ հիվանդություն՝ ՄԻԱՎ վարակ: Այն ախտահարում է մարդու

Իմունային համակարգը, ոչնչացնում է իմունիտետի բջիջները (հիմնականում վարակների հանդեպ իմունային համակարգի համար պատասխան տվող լիմֆոցիտները), որոնք օգնում են օրգանիզմին հաղթահարել ախտածին միկրոօրգանիզմներին: ՄԻԱՎ-ի ՌՆԹ-ն ՄԻԱՎ վարակի վաղ մարկեր է և արյան մեջ հայտնաբերվում է ավելի վաղ, քան մյուս մարկերները:

Մարդու իմունային անբավարարության վիրուսը ախտորոշելու համար օգտագործվում է չորրորդ սերնդի կոմբինացված թեստային համակարգ, որն ի վիճակի է հայտնաբերել ՄԻԱՎ վարակը վիրուսի արյուն մտնելուց հետո 2 շաբաթվա ընթացքում, մինչդեռ առաջին սերնդի թեստային համակարգերը դա անում են վարակվելուց միայն 6-12 շաբաթ անց: Բացի այդ, այս անալիզն արյան մեջ հայտնաբերում է ՄԻԱՎ-ի հակամարմինները (օգտագործելով հակաձին-հակամարմին ռեակցիաները): Անալիզն օգտագործվում է ՄԻԱՎ-ի վաղ ախտորոշման համար, ինչը թույլ է տալիս կանխել վիրուսի հետագա փոխանցումն այլ մարդկանց, ինչպես նաև ժամանակին սկսել հակառետրովիրուսային թերապիա և այն հիվանդությունների բուժում, որոնք նպաստում են ՄԻԱՎ վարակի առաջընթացին:

**Մեթոդ** ԻԲԼԱ (ICLA)

**Կենսանմուշ** Երակային արյուն (Clot-Activator)

### **Հետազոտության նախապայմանները**

- բացառել սննդակարգից ճարպային մթերքները թեստից 24 ժամ առաջ
- բացառել սննդակարգից ալկոհոլը թեստից 24 ժամ առաջ

### **Իրականացման ժամանակացույց**

Թեստը մինչև ժամը 14:00 հանձնելու դեպքում, արդյունքը՝ տվյալ օրը 17:00: 14:00-ից հետո՝ հաջորդ օրը:

**Ալֆա-ֆետոպրոտեին/հղիության մարկեր (AFP) 6000 դրամ**

**Նկարագիր**

Ալֆա-ֆետոպրոտեինը (AFP) գլիկոպրոտեին է, որը նորմալում արտադրվում է հղիության ժամանակ պտղի լյարդի և դեղնուցապարկի բջիջների կողմից: Հղի կնոջ արյան մեջ AFP-ի մակարդակը բարձրանում է 10-րդ շաբաթից: AFP-ի շեղումը մոր արյան մեջ կարող է լինել պտղի զարգացման պաթոլոգիայի նշան: AFP-ն մտնում է «եռակի թեստի» կամ «երկրորդ սքրինինգի» մեջ՝ հղիության 14-20 շաբաթում, ազատ էստրիոլի և  $\beta$ -hCG-ի հետ համատեղ, որոնց արդյունքներով հայտնաբերվում են քրոմոսոմային անոմալիաներ և պտղի զարգացման պաթոլոգիաներ: Մեծահասակ հիվանդների մոտ AFP-ի մակարդակի աճը կարող է կապված լինել տարբեր հիվանդությունների հետ (սովորաբար այն բացակայում է կամ հայտնաբերվում է նվազագույն կոնցենտրացիայում): Մասնավորապես, ռեֆերենս ցուցանիշների գերազանցումը բնորոշ է լյարդի հիվանդություններին: Եթե նորման զգալիորեն բարձր է, դա հաճախ վկայում է չարորակ նորագոյացության մասին: Սակայն ախտորոշումը հաստատելու համար անհրաժեշտ է համալիր հետազոտություն՝ մեկ թեստի արդյունքները բավարար չեն:

## **Մեթոդ** ԻՔԼԱ (ICLA)

**Կենսանմուշ** Երակային արյուն Clot-Activator

## **Հետազոտության նախապայմանները**

- բացառել սննդակարգից ճարպային մթերքները՝ թեստից 24 ժամ առաջ
- բացառել սննդակարգից ալկոհոլը՝ թեստից 24 ժամ առաջ

## **Իրականացման ժամանակացույց**

արդյունքը՝ տվյալ օրը 17:00:

**Մարդու խորիոնային գոնադոտրոպին ընդհանուր (hCG) 6000 դրամ**

## **Նկարագիր**

Մարդու խորիոնային գոնադոտրոպինը (hCG) գլիկոպրոտեին է, որը բաղկացած է  $\alpha$ - և  $\beta$ -ենթաբաժիններից, արտադրվում է հղիության ընթացքում պլացենտայի սինցիոտրոֆոբլաստով: Աջակցում է դեղին մարմնի գոյությանը և նրա ֆունկցիոնալությանը, խթանելով իր կողմից մեծ քանակությամբ պրոգեստերոնի արտադրությունը: hCG-ի մեզում և արյան շիճուկում պարունակությունն աճում է



հղիության առաջին օրվանից, որի վրա հիմնված է հղիության թեստերի մեծամասնությունը: Բազմակի հղիության դեպքում hCG-ի մակարդակն ավելի բարձր է: hCG-ի դինամիկայի թեստը թույլ է տալիս եզրակացություն անել հաջող զարգացող հղիության մասին, այն կարող է նշանակվել, եթե կա հղիության դադարեցման սպառնալիք կամ կասկած: hCG-ի համար արյան անալիզն օգտագործվում է նաև մի շարք ուռուցքների հայտնաբերման (հիմնականում տրոֆոբլաստիկ) և դրանց բուժման արդյունավետությունը գնահատելու համար: Հորմոնի կոնցենտրացիան աճում է բեղմնավորման պահից, նրա գագաթնակետը հասնում է հղիության երկրորդ ամսում: HCG-ն նպաստում է մի շարք հորմոնների սինթեզին, որոնք անհրաժեշտ են հղիության բնականոն զարգացման համար և պաշտպանում է երեխային մոր օրգանիզմի իմունային ռեակցիայից: HCG-ի ռեֆերենս ցուցանիշները կախված են հղիության ժամկետից:

### **Մեթոդ ԻՔԼԱ (ICLA)**

**Կենսասնմուշ** Երակային արյուն (Clot-Activator)

### **Հետազոտության նախապայմանները**

- բացառել սննդակարգից ճարպային մթերքները թեստից 24 ժամ առաջ
- բացառել սննդակարգից ալկոհոլը թեստից 24 ժամ առաջ

### **Իրականացման ժամանակացույց**

արդյունքը՝ տվյալ օրը 17:00:

**HE-4- մարդու էպիդիդիմալ սպիտակուց 15000 դրամ**

### **Նկարագիր**

Մարդու էպիդիդիմալ սեկրետորային սպիտակուց 4-ը գլիկոպրոտեին է, որը սինթեզվում է փոքր քանակությամբ՝ վերարտադրողական օրգանների, ենթաստամոքսային գեղձի և շնչառական օրգանների էպիթելային բջիջների կողմից:

Այս պաթոլոգիան (ներառյալ վաղ շրջանում) ախտորոշելու համար խորհուրդ է տրվում CA-125-ի հետ համատեղ անցկացնել HE-4-ի արյան անալիզ և հաշվարկել

ROMA ռիսկի (Risk of Ovarian Malignancy Algorithm) գործակիցը, որը թույլ է տալիս հիվանդներին բաժանել ձվարանների քաղցկեղի բարձր և ցածր ռիսկի խմբերի:

**Մեթոդ** ԻՔԼԱ (ICLA)

**Կենսանմուշ** Երակային արյուն (Clot-Activator)

### **Հետազոտության նախապայմանները**

- բացառել սննդակարգից ճարպային մթերքներ թեստից 24 ժամ առաջ
- բացառել սննդակարգից ալկոհոլը թեստից 24 ժամ առաջ

### **Իրականացման ժամանակացույց**

արդյունքը՝ տվյալ օրը 17:00:

### **CA-125 օնկոմարկեր**

**7000 դրամ**

### **Նկարագիր**

Cancer Antigen 125-ը բարձր մոլեկուլային քաշի սպիտակուց է: CA-125 արյան անալիզն օգտագործվում է որպես ձվարանների քաղցկեղի մարկեր, ուռուցքային մարկերի մակարդակը զգալիորեն ավելանում է հիվանդության II-IV փուլերում:

CA-125-ի մակարդակը փոխվում է կախված դաշտանային ցիկլից և հղիությունից, ինչը կարևոր է հաշվի առնել արդյունքները մեկնաբանելիս: Միայն բժիշկը կարող է մեկնաբանել CA-125 վերլուծության արդյունքները, կատարել ախտորոշում և նշանակել լրացուցիչ հետազոտություններ և բուժում:

## Մեթոդ

ԻՔԼԱ (ICLA)

## Կենսանմուշ

Երակային արյուն Clot-Activator

## Հետազոտության նախապայմանները

- բացառել սննդակարգից ճարպային մթերքները թեստից 24 ժամ առաջ
- բացառել սննդակարգից ալկոհոլը թեստից 24 ժամ առաջ

## Իրականացման ժամանակացույց

արդյունքը՝ տվյալ օրը 17:00:

**R.O.M.A. 1 (վերարտադրողական տարիք) գործակից 15000 դրամ**

## Նկարագիր

ROMA-ն (Risk of Ovarian Malignancy Algorithm) ցուցանիշ է, որը հաշվարկվում է CA-125 և HE-4 օնկոմարկերների մակարդակի հիման վրա, որը թույլ է տալիս որոշել հիվանդների մոտ ձվարանների քաղցկեղի բարձր և ցածր ռիսկերը: Ձվարանների բարորակ և չարորակ ուռուցքների դիֆերենցիալ ախտորոշումը ժամանակակից գինեկոլոգիկան ամենադժվար խնդիրներից է:

ROMA ալգորիթմը մաթեմատիկական մոդել է, որը հաշվարկում է ձվարանների քաղցկեղ ունենալու հավանականությունը՝ հաշվի առնելով CA-125 և HE-4 ուռուցքային մարկերների նշված արժեքները՝ հաշվի առնելով հիվանդի դաշտանադադարային կարգավիճակը կամ վերարտադրողական տարիքը: R.O.M.A . 1 հաշվարկը կիրառվում է վերարտադրողական տարիքի կանանց համար: Ալգորիթմը կիրառելի չէ ձվարանների արգանդի վիրահատություն տարած կանանց համար:

## Մեթոդ

Հաշվարկային

## Կենսանմուշ

Երակային արյուն (Clot-Activator)

## Հետազոտության նախապայմանները

- բացառել սննդակարգից ճարպային մթերքները թեստից 24 ժամ առաջ
- բացառել սննդակարգից ալկոհոլը թեստից 24 ժամ առաջ

## Իրականացման ժամանակացույց

արդյունքը՝ տվյալ օրը 17:00:

**R.O.M.A. 2 (դաշտանադադար) գործակից 15000 դրամ**

## Նկարագիր

ROMA-ն (Risk of Ovarian Malignancy Algorithm) ցուցանիշ է, որը հաշվարկվում է CA-125 և HE-4 օնկոմարկերների մակարդակի հիման վրա, որը թույլ է տալիս որոշել հիվանդների մոտ ձվարանների քաղցկեղի բարձր և ցածր ռիսկերը: Ձվարանների բարորակ և չարորակ ուռուցքների դիֆերենցիալ ախտորոշումը ժամանակակից գինեկոլոգիկական ամենադժվար խնդիրներից է:

ROMA ալգորիթմը մաթեմատիկական մոդել է, որը հաշվարկում է ձվարանների քաղցկեղ ունենալու հավանականությունը՝ հաշվի առնելով CA-125 և HE-4 ուռուցքային մարկերների նշված արժեքները՝ հաշվի առնելով հիվանդի դաշտանադադարային կարգավիճակը կամ վերարտադրողական տարիքը: R.O.M.A . 2 հաշվարկը կիրառվում է դաշտանադադարից հետո: Ալգորիթմը կիրառելի չէ ձվարանների արգանդի վիրահատություն տարած կանանց համար:

## Մեթոդ Հաշվարկային

**Կենսասնմուշ** Երակային արյուն (Clot-Activator)

## Հետազոտության նախապայմանները

- Բացառել սննդակարգից ճարպային մթերքները թեստից 24 ժամ առաջ
- Բացառել սննդակարգից ալկոհոլը թեստից 24 ժամ առաջ

## Իրականացման ժամանակացույց

արդյունքը՝ տվյալ օրը 17:00:

## CA 15-3 օնկոմարկեր 7000 դրամ

## Նկարագիր

CA 15-3 օնկոմարկերը բարձր մոլեկուլային քաշի մուցինային տիպի գլիկոպրոտեին է, որն արտադրվում է նորմալ կրծքագեղձի բջիջների կողմից: CA 15-3 թեստը չունի բավարար զգայունություն և սպեցիֆիկություն կրծքագեղձի քաղցկեղի վաղ փուլի ախտորոշման համար, սակայն այն թույլ է տալիս վերահսկել հիվանդության ընթացքը և ռեցիդիվների առաջացումը: CA 15-3-ի բարձր կոնցենտրացիան միշտ չէ, որ վկայում է կրծքագեղձի քաղցկեղի մասին, երբեմն նորմայի գերազանցումը տեղի է ունենում այլ տեղակայման ուռուցքների, կաթնագեղձերի բարորակ գոյացությունների, հեպատիտի և լյարդի ցիրոզի, առողջ կանանց մոտ հղիության ընթացքում:

## Մեթոդ

ԻՔԼԱ (ICLA)

## Կենսանմուշ

Երակային արյուն Clot-Activator

## Հետազոտության նախապայմանները

- բացառել սննդակարգից ճարպային մթերքները թեստից 24 ժամ առաջ
- բացառել սննդակարգից ալկոհոլը թեստից 24 ժամ առաջ

## Իրականացման ժամանակացույց

արդյունքը՝ տվյալ օրը 17:00:

## CA 19-9 օնկոմարկեր 7000 դրամ

## Նկարագիր

CA 19-9-ը սպեցիֆիկ հակաձին է, որն արտադրվում է աղեստամոքսային տրակտի էպիթելային բջիջների կողմից: Նրա մակարդակը բարձրանում է աղեստամոքսային համակարգի, հատկապես ենթաստամոքսային գեղձի ուռուցքներով գրեթե բոլոր հիվանդների մոտ:

Ուռուցքային բջիջների կողմից արտադրվելով՝ CA 19-9-ը մտնում է արյան մեջ, դարձնելով այն արդյունավետ ուռուցքային մարկեր, որը թույլ է տալիս վերահսկել հիվանդության ընթացքը: Որպես կանոն, որքան բարձր է հիվանդի CA 19-9 մակարդակը, այնքան հիվանդության ավելի ուշ փուլ է:

## Մեթոդ

ԻԲԼԱ (ICLA)

## Կենսանմուշ

Երակային արյուն Clot-Activator

## Հետազոտության նախապայմանները

- բացառել սննդակարգից ճարպային մթերքները թեստից 24 ժամ առաջ
- բացառել սննդակարգից ալկոհոլը թեստից 24 ժամ առաջ

## Իրականացման ժամանակացույց

արդյունքը՝ տվյալ օրը 17:00:

## Տափակաբջջային կարցինոմի անտիգեն (SCC) 12000 դրամ

## Նկարագիր

SCC օնկոմարկեր սպիտակուց է, որը սինթեզվում է տափակ էպիթելից ծագում ունեցող ուռուցքային բջիջների կողմից (առաջին հերթին դա արգանդի վզիկի ուռուցքներն են): Այս սպիտակուցի կոնցենտրացիայի որոշումն օգնում է գնահատել բուժման արդյունավետությունը և օգտագործվում է հիվանդության հնարավոր ռեցիդիվների վաղ ախտորոշման համար:

Տափակաբջջային կարցինոման քաղցկեղի մի տեսակ է, որը կարող է զարգանալ ցանկացած էպիթելային հյուսվածք ունեցող օրգանում: Առողջ էպիթելիալ բջիջները սինթեզում են այս սպիտակուցի փոքր քանակությունն, ուստի այն արյան մեջ հասնում է միայն փոքր քանակությամբ: Կլինիկական բժշկությունը պարզել է ուղիղ համեմատական կապ SCC ուռուցքային մարկերի կոնցենտրացիայի և ուռուցքի չափի, ուռուցքային գործընթացի փուլի և ավշային հանգույցների վնասման միջև:

SCC անալիզն օգտագործվում է ոչ միայն էպիթելային ծագման չարորակ նորագոյացությունների դիֆերենցիալ ախտորոշման, այլև իրականացվող բուժման արդյունավետությունը գնահատելու և թերապևտիկ տակտիկայի ժամանակին շտկման համար:

**Մեթոդ** ԻՔԼԱ (ICLA)

**Կենսանմուշ** Երակային արյուն Clot-Activator

### **Հետազոտության նախապայմանները**

- բացառել սննդակարգից ճարպային մթերքները՝ թեստից 24 ժամ առաջ
- բացառել սննդակարգից ալկոհոլը՝ թեստից 24 ժամ առաջ

### **Իրականացման ժամանակացույց**

արդյունքը՝ տվյալ օրը 17:00:

### **Կարցինո-էմբրիոնալ անտիգեն (CEA) 5000 դրամ**

### **Նկարագիր**

Կարցինոէմբրիոնային հակաձինը (CEA) սպիտակուցի և ածխաջրերի միացություն է, որը սինթեզվում է մեր օրգանիզմի որոշ բջիջների կողմից նվազագույն քանակությամբ: Քանի որ CEA-ի հետազոտության հիմնական ցուցումը օնկոլոգիական պաթոլոգիան է, և դրա բնականոն արտադրությունը հնարավոր է միայն ներարգանդային զարգացման ընթացքում, հայտնվեց նրա անունը՝ «կարցինոէմբրիոնային հակաձին»:

Կարցինոէմբրիոնային հակաձինների հետազոտությունը պարտադիր է, եթե կասկածվում է հաստ աղիքի կամ ուղիղ աղիքի քաղցկեղ: Նույնիսկ սկզբնական չարորակ փոփոխությունների առկայության դեպքում ուռուցքային բջիջներն արտադրում են CEA ավելի մեծ քանակությամբ, ինչը արտացոլվում է արյան մեջ դրա կոնցենտրացիայի մեջ:

Հետազոտությունն իրականացվում է նաև մի շարք այլ հիվանդությունների դեպքում, հատկապես թոքերի, ձվարանների, շագանակագեղձի, կրծքագեղձի ուռուցքային



հիվանդությունների առկայության բարձր հավանականության դեպքում: CEA-ն կարող է չափավոր աճել նաև ներքին օրգանների բորբոքային պրոցեսների և բարորակ նորագոյացությունների դեպքում: Բացի այդ, CEA-ի որոշակի բարձրացում է դիտվում ծխախոտի և ալկոհոլի մշտական օգտագործման դեպքում:

**Մեթոդ** ԻՔԼԱ (ICLA)

**Կենսասնմուշ** Երակային արյուն (Clot-Activator)

### **Հետազոտության նախապայմանները**

- բացառել սննդակարգից ճարպային մթերքները թեստից 24 ժամ առաջ
- բացառել սննդակարգից ալկոհոլը թեստից 24 ժամ առաջ

### **Իրականացման ժամանակացույց**

արդյունքը՝ տվյալ օրը 17:00:

**Մարդու խորիոնային գոնադոտրոպին ընդհանուր (HCG) 5000 դրամ**

### **Նկարագիր**

Մարդու խորիոնային գոնադոտրոպինը (hCG) գլիկոպրոտեին է, որը կազմված է  $\alpha$ - և  $\beta$ - ենթամիավորներից: Սովորաբար, hCG-ն սինթեզվում է փոքր քանակությամբ: Նրա արտադրությունը զգալիորեն ավելանում է կանանց մոտ՝ հղիության ընթացքում:

Բացի նրանից, որ hCG-ն արտադրվում է հղիության ժամանակ պլացենտայի սինցիտիոտրոֆոբլաստի կողմից, hCG-ի արյան անալիզը նաև կիրառվում է մի շարք ուռուցքների հայտնաբերման (առաջին հերթին տրոֆոբլաստային) և նրանց բուժման արդյունավետության հսկողության համար: HCG-ն ծառայում է ոչ միայն վերարտադրողական համակարգի քաղցկեղի, այլև երիկամների, աղեստամոքսային տրակտի և թոքերի չարորակ նորագոյացությունների համար որպես մարկեր:

hCG թեստը մեծ նշանակություն ունի քաղցկեղով ախտորոշված հիվանդների վիճակի մոնիթորինգի համար, ովքեր բուժվում են կամ արդեն ավարտել են այն: HCG-ն նաև

կիրառվում է տղամարդկանց մոտ ամորձիների քաղցկեղի ախտորոշման և բուժման ընթացքի հսկողության համար:

**Մեթոդ** ԻՔԼԱ (ICLA)

**Կենսասնմուշ** Երակային արյուն (Clot-Activator)

### **Հետազոտության նախապայմանները**

- բացառել սննդակարգից ճարպային մթերքները թեստից 24 ժամ առաջ
- բացառել սննդակարգից ալկոհոլը թեստից 24 ժամ առաջ

### **Իրականացման ժամանակացույց**

արդյունքը՝ տվյալ օրը 17:30:

**Ալֆա-ֆետոպրոտեին (AFP) 6000 դրամ**

### **Նկարագիր**

Մեծահասակների օրգանիզմում Ալֆա-ֆետոպրոտեինը բացակայում է կամ հայտնաբերվում է նվազագույն քանակությամբ: Մասնավորապես, ռեֆերենս ցուցանիշների գերազանցումը բնորոշ է լյարդի հիվանդություններին: AFP-ն նաև կիրառվում է տղամարդկանց մոտ ամորձիների քաղցկեղի ախտորոշման և բուժման ընթացքի հսկողության համար:

Եթե նորման զգալիորեն գերազանցում է, դա հաճախ վկայում է չարորակ նորագոյացության առկայության մասին: Շատ դեպքերում դա լյարդի քաղցկեղ է: Ախտորոշումը հաստատելու համար անհրաժեշտ է համալիր հետազոտություն, մեկ հետազոտության արդյունքները բավարար չեն:

**Մեթոդ** ԻՔԼԱ (ICLA)

**Կենսասնմուշ** Երակային արյուն Clot-Activator

## Հետազոտության նախապայմանները

- բացառել սննդակարգից ճարպային մթերքները թեստից 24 ժամ առաջ
- բացառել սննդակարգից ալկոհոլը թեստից 24 ժամ առաջ

## Իրականացման ժամանակացույց

արդյունքը՝ տվյալ օրը 17:00

## Կալցիտոնին 7000 դրամ

### Նկարագիր

Կալցիտոնինը վահանաձև գեղձի հորմոն է, որն արտադրվում է պարաֆոլիկուլյար C բջիջների կողմից: Կալցիտոնինը չափազանց կարևոր հորմոն է, որը պարաստիհորմոնի հետ միասին կարգավորում է արյան և ոսկրերի մեջ կալցիումի և ֆոսֆատի ճիշտ հարաբերակցությունը: Կալցիտոնինի համար արյան անալիզն ունի ախտորոշիչ մեծ արժեք: Կալցիտոնինի բարձր մակարդակի դեպքում պարատադիր պետք է բացառվեն վահանաձև գեղձի մեղուլյար քաղցկեղը, բազմակի էնդոկրին նեոպլազիայի համախտանիշը, վահանաձև գեղձի հիպերպլազիան, հիպերպարաթիրեոզը, ինչպես նաև մակերիկամների ուռուցքը: Կալցիտոնինի թեստավորումն իրականացվում է նաև մեղուլյար քաղցկեղի վիրաբուժական բուժումից հետո: Ընդ որում, կոնտրոլ անալիզը կարող է առաջարկվել նույնիսկ ուշ հետվիրահատական շրջանում, ինչը հնարավորություն է տալիս բացառել ուռուցքային մետաստազների առկայությունը:

### Մեթոդ ԻՔԼԱ (ICLA)

### Կենսանմուշ Երակային արյուն (Clot-Activator)

## Հետազոտության նախապայմանները

- Բացառել սննդակարգից ճարպային մթերքները թեստից 24 ժամ առաջ
- Բացառել սննդակարգից ալկոհոլը թեստից 24 ժամ առաջ

## Իրականացման ժամանակացույց

արդյունքը՝ տվյալ օրը 17:00 :

## Շագանակագեղձի սպեցիֆիկ հակաձին (PSA) ազատ 8000 դրամ

### Նկարագիր

Ազատ PSA-ն (PSA, շագանակագեղձի սպեցիֆիկ հակաձին) մարկեր է, որն օգտագործվում է շագանակագեղձի նորագոյացությունների ախտորոշման համար՝ վերահսկելու դրանց զարգացման դինամիկան, բուժման առաջընթացը և ռեցիդիվները: PSA-ն սպիտակուց է (գլիկոպրոտեին), որն արտադրվում է շագանակագեղձի կողմից:

Այն սերմնահեղուկը հեղուկացնող ֆերմենտ է, ինչի հետևանքով հակաձնի մեծ մասն արտազատվում է դրա մեջ, և միայն մի փոքր մասն է սեկրեցվում է արյան մեջ: Ազատ PSA-ն որոշվում է ընդհանուր PSA-ի բարձր ցուցանիշների դեպքում արդյունքների և շագանակագեղձի քաղցկեղի ռիսկի (ցածր/բարձր) մակարդակի ճշգրտման համար:

**Մեթոդ** ԻՔԼԱ (ICLA)

**Կենսամուշ** Երակային արյուն Clot-Activator

## Հետազոտության նախապայմանները

- Բացառել սննդակարգից ճարպային մթերքները թեստից 24 ժամ առաջ
- Բացառել սննդակարգից ալկոհոլը թեստից 24 ժամ առաջ

## Իրականացման ժամանակացույց

արդյունքը՝ տվյալ օրը 17:00:

## Շագանակագեղձի սպեցիֆիկ հակաձին (PSA) ընդհանուր 5000 դրամ

### Նկարագիր

PSA-ն սպիտակուց է (գլիկոպրոտեին), որն արտադրվում է շագանակագեղձի կողմից: Այն սերմնահեղուկը հեղուկացնող ֆերմենտ է, ինչի հետևանքով հակաձնի մեծ մասն արտազատվում է դրա մեջ, և միայն մի փոքր մասն է սեկրեցվում արյան մեջ: Ընդհանուր PSA-ն չափավոր աճում է շագանակագեղձի հիպերտրոֆիայի (ադենոմայի), շագանակագեղձի սուր և քրոնիկական բորբոքային հիվանդությունների (պրոստատիտ) և միզուղիների վարակների դեպքում, սակայն այս հետազոտության հիմնական ախտորոշիչ արժեքը շագանակագեղձի քաղցկեղի ժամանակին հայտնաբերումն է:

Շագանակագեղձի քաղցկեղը տղամարդկանց մոտ ամենատարածված քաղցկեղներից մեկն է: Այս հիվանդությունը հատկապես տարածված է 50 տարեկանից բարձր տղամարդկանց մոտ: Որքան բարձր է արյան մեջ PSA-ի մակարդակը, այնքան ավելի վստահ կարող ենք խոսել շագանակագեղձի չարորակ պրոցեսի առկայության մասին: PSA ցուցանիշի զգայունությունը զգալիորեն մեծանում է արյան մեջ այս նյութի ընդհանուր և ազատ ֆրակցիաների միաժամանակյա վերլուծությամբ և ստացված արդյունքների հարաբերակցությունը որոշելով:

**Մեթոդ** ԻՔԼԱ (ICLA)

## Կենսանմուշ Երակային արյուն Clot-Activator

### Հետազոտության նախապայմանները

- բացառել սննդակարգից ճարպային մթերքները՝ թեստից 24 ժամ առաջ
- բացառել սննդակարգից ալկոհոլը՝ թեստից 24 ժամ առաջ

### Իրականացման ժամանակացույց

արդյունքը՝ տվյալ օրը 17:00:

### Ընդհանուր սպիտակուց 1000 դրամ

### Նկարագիր

Արյան մեջ ընդհանուր սպիտակուցի մակարդակի որոշումը հիմնական կենսաքիմիական ցուցանիշներից մեկն է, որն արտացոլում է օրգանիզմում նյութափոխանակության վիճակը:

Ընդհանուր սպիտակուցի մակարդակի նորմայից շեղումը կարող է լինել ինչպես ֆիզիոլոգիական (ֆիզիկական ծանրաբեռնվածություն, հղիություն, լակտացիա), այնպես էլ պաթոլոգիական: Արյան մեջ ընդհանուր սպիտակուցի պարունակությունը կախված է լյարդի և լիմֆոցիտների սինթեզից:

### Մեթոդ կոլորիմետրիկ

## Կենսանմուշ Երակային արյուն Clot-Activator

### Հետազոտության նախապայմանները

- առավոտյան քաղցած՝ առնվազն 8 -12 ժ
- ջուրը՝ առօրյա կարգով
- նախօրեին խուսափել սննդային չարաշահումից
- բացառել սննդակարգից ճարպային մթերքները՝ թեստից 24 ժամ առաջ

- բացառել սննդակարգից ակոհոլը՝ թեստից 24 ժամ առաջ
- ԿՏ, մամոգրաֆիա և ճառագայթային հետազոտություններից պետք է անցնի 2-3 օր
- մինչև 1 տարեկան երեխաները նմուշառումից 30-40 րոպե առաջ չպետք է ուտեն
- 1-5 տարեկան երեխաները՝ նմուշառումից 2-3 ժամ առաջ չպետք է ուտեն

## Իրականացման ժամանակացույց

արդյունքը՝ տվյալ օրը 17:00 :

## Գլյուկոզ 1000 դրամ

### Նկարագիր

Օրգանիզմում գլյուկոզի կոնցենտրացիան կախված է գլյուկոզի սինթեզի և անջատման մի շարք գործընթացներից և կանոնակարգվում է մի շարք հորմոններով: Արյան մեջ գլյուկոզի մակարդակի իջեցմանը նպաստող հիմնական հորմոնն է հանդիսանում ինսուլինը, մինչդեռ մյուս հորմոնները՝ ԹԸՀ, Սոմատոտրոպ, Կորտիզոլ, նպաստում են արյան մեջ գլյուկոզի մակարդակի բարձրացմանը: Արյան մեջ գլյուկոզի մակարդակի հայտնաբերման լաբորատոր թեստը համարվում է շաքարային դիաբետն ախտորոշելու հիմնական միջոց:

**Մեթոդ** Էնզիմատիկ, հեկտոկինազայով

**Կենսասնմուշ** Երակային արյուն Clot-Activator

### Հետազոտության նախապայմանները

- առավոտյան քաղցած՝ առնվազն 8 -12 ժ
- ջուրը՝ առօրյա կարգով
- նախօրեին խուսափել սննդային չարաշահումից
- բացառել սննդակարգից ճարպային մթերքները՝ թեստից 24 ժամ առաջ
- բացառել սննդակարգից ակոհոլը՝ թեստից 24 ժամ առաջ
- ԿՏ, մամոգրաֆիա և ճառագայթային հետազոտություններից պետք է անցնի 2-3 օր

- մինչև 1 տարեկան երեխաները նմուշառումից 30-40 րոպե առաջ չպետք է ուտեն
- 1-5 տարեկան երեխաները՝ նմուշառումից 2-3 ժամ առաջ չպետք է ուտեն

## Իրականացման ժամանակացույց

արդյունքը՝ տվյալ օրը 17:00,

## Գլիկոզացված հեմոգլոբին 4000 դրամ

### Նկարագիր

Գլիկոզացված հեմոգլոբինը հեմոգլոբինի հետ գլյուկոզի միացությունն է, շաքարային դիաբետի մարկերներից մեկը: Գլիկոզացված հեմոգլոբինի քանակը կախված է վերջին 6-12 շաբաթվա ընթացքում արյան մեջ գլյուկոզի միջին մակարդակից: ԱՀԿ-ի առաջարկությունների համաձայն՝ արյան մեջ գլիկոզացված հեմոգլոբինի մակարդակի որոշումն այն ցուցանիշներից մեկն է, որը թույլ է տալիս առավել ճշգրիտ վերահսկել շաքարային դիաբետի ընթացքը:

### Մեթոդ

- A1c-latex agglutination
- Hb –SLS մեթոդ (գունաչափական)

### Կենսանմուշ

երակային արյուն K3-EDTA (integra 400)

### Հետազոտության նախապայմանները

- առավոտյան քաղցած՝ առնվազն 8 -12 ժ
- ջուրը՝ առօրյա կարգով
- նախօրեին խուսափել սննդային չարաշահումից
- բացառել սննդակարգից ճարպային մթերքները՝ թեստից 24 ժամ առաջ
- բացառել սննդակարգից ակոհոլը՝ թեստից 24 ժամ առաջ
- ԿՏ, մամոգրաֆիա և ճառագայթային հետազոտություններից պետք է անցնի 2-3 օր



- մինչև 1 տարեկան երեխաները նմուշառումից 30-40 րոպե առաջ չպետք է ուտեն
- 1-5 տարեկան երեխաները՝ նմուշառումից 2-3 ժամ առաջ չպետք է ուտեն

## Իրականացման ժամանակացույց

արդյունքը՝ տվյալ օրը 17:00:

## C-Պեպտիդ 6000 դրամ

### Նկարագիր

C-պեպտիդը կայուն միացություն է, որն առաջանում է պրոինսուլինից ինսուլինի սինթեզի ժամանակ: Չնայած այն հանգամանքին, որ C-պեպտիդը և ինսուլինն առաջանում են նույն քանակությամբ, C-պեպտիդն ավելի երկար է պահպանվում արյան բաղադրության մեջ, քան ինսուլինը, որը շատ արագ մետաբոլիզացվում է և դուրս է գալիս օրգանիզմից: Այդ իսկ պատճառով C-պեպտիդի որոշումը թույլ է տալիս ավելի ճշգրիտ սահմանել ինսուլինի սինթեզի մակարդակը:

### Մեթոդ ԻՔԼԱ (ICLA)

**Կենսանմուշ** Երակային արյուն (Clot-Activator)

### Հետազոտության նախապայմանները

- առավոտյան քաղցած՝ առնվազն 8 -12 ժ
- ջուրը՝ առօրյա կարգով
- նախօրեին խուսափել սննդային չարաշահումից
- բացառել սննդակարգից ճարպային մթերքներ թեստից 24 ժամ առաջ
- բացառել սննդակարգից ակոհոլը թեստից 24 ժամ առաջ
- ԿՏ, մամոգրաֆիա և ճառագայթային հետազոտություններից պետք է անցնի 2-3 օր
- մինչև 1 տարեկան երեխաները նմուշառումից 30-40 րոպե առաջ չպետք է ուտեն
- 1-ից 5 տարեկան երեխաները՝ նմուշառումից 2-3 ժամ առաջ չպետք է ուտեն

## Իրականացման ժամանակացույց

արդյունքը՝ տվյալ օրը 17:00 :

## Ալբումին 1000 դրամ

### Նկարագիր

Ալբումինը արյան պլազմայի սպիտակուցների ընդհանուր քանակի մինչև 60% կազմող սպիտակուց է: Նրա հիմնական գործառույթներն են՝ արյան օնկոտիկ ճնշման պահպանումը, տարբեր քիմիական նյութերի տեղափոխումը և նյութափոխանակության գործընթացներին մասնակցությունը:

### Մեթոդ

Իմունոտուրբիդիմետրիա

### Կենսասնումուշ

Երակային արյուն Clot-Activator

### Հետազոտության նախապայմանները

- առավոտյան քաղցած՝ առնվազն 8 -12 ժ
- ջուրը՝ առօրյա կարգով
- նախօրեին խուսափել սննդային չարաշահումից
- բացառել սննդակարգից ճարպային մթերքները՝ թեստից 24 ժամ առաջ
- բացառել սննդակարգից ալկոհոլը՝ թեստից 24 ժամ առաջ
- ԿՏ, մամոգրաֆիա և ճառագայթային հետազոտություններից պետք է անցնի 2-3 օր
- մինչև 1 տարեկան երեխաները նմուշառումից 30-40 րոպե առաջ չպետք է ուտեն
- 1-5 տարեկան երեխաները՝ նմուշառումից 2-3 ժամ առաջ չպետք է ուտեն

### Իրականացման ժամանակացույց

արդյունքը՝ տվյալ օրը 17:00 :

## Այբումին մեզում 5000 դրամ

### Նկարագիր

Տվյալ հետազոտությունը նախատեսված է մեզում արյան պլազմայի հիմնական սպիտակուցի՝ այբումինի որոշման համար: Այս խմբի սպիտակուցը առաջին հերթին սկսում է ներթափանցել երիկամների հիվանդությունների դեպքում: Մեզում նրա առկայությունը նեֆրոպաթիայի ամենավաղ լաբորատոր ցուցանիշներից մեկն է: Իրականացվում է 24 ժամվա մեզում, քանի որ օրվա ընթացքում հնարավոր են կոնցենտրացիայի տատանումներ՝ կախված սննդի ընդունումից, հեղուկի քանակից, ֆիզիկական ակտիվությունից և այլն:

### Մեթոդ

Իմունոտուրբիդիմետրիա

### Կենսանմուշ

մեզ

### Հետազոտության նախապայմանները

- Մեզը հավաքվում է ստերիլ տարայում՝ 24 ժամվա ընթացքում, ընդ որում՝
- 1-ին օրվա առաջին մեզը բաց ենք թողնում, իսկ հաջորդ օրվա առաջին մեզն ավելացնում ենք ընդհանուրին, խառնում, դնում սառնարան
  - տարայի վրա գրվում է ծավալը (մլ)

### Իրականացման ժամանակացույց

արդյունքը՝ տվյալ օրը 17:00 :

## Ալբումին/կրեատինին հարաբերակցությունը մեզում 7000 դրամ

### Նկարագիր

Ալբումինի և կրեատինինի կոնցենտրացիայի որոշումը մեզի մեկ բաժնում ալբումին-կրեատինինային հարաբերակցության հետագա հաշվարկով (ալբումինուրիա մեզի մեկ բաժնում), որն օգտագործվում է երիկամների քրոնիկ հիվանդության պրոգրեսիվության վաղ ախտորոշման և գնահատման համար:

Ալբումինուրիայի ախտորոշումը պարզեցնելու համար առաջարկվել է մեզի մեկ բաժնում չափել ալբումինի կոնցենտրացիան և շտկել այդ ցուցանիշը կրեատինինի միջոցով, որը նույնպես հաշվարկվել է մեզի տվյալ չափաբաժնում: Այսպես ստացվել է ալբումին-կրեատինին հարաբերակցությունը (ACR): ACR-ում կրեատինինը մեզի կոնցենտրացիայի գնահատման միջոց է: Հաշվի առնելով ACR-ի անալիզի ինֆորմատիվությունը և իրականացման պարզությունը, այսօր այն խորհուրդ է տրվում որպես ալբումինուրիայի հիմնական սքրինինգային թեստ:

### Մեթոդ

Հաշվարկային

### Կենսանմուշ

մեզ

### Հետազոտության նախապայմանները

նմուշառվում է մեզի ցանկացած բաժին՝ բացի առաջին բաժնից

### Իրականացման ժամանակացույց

արդյունքը՝ տվյալ օրը 17:00 :

## Ասպարտատամինոտրանսֆերազ (AsAT) 1000 դրամ

### Նկարագիր

Ասպարտատամինոտրանսֆերազը (ASAT) ֆերմենտ է, որը գտնվում է օրգանիզմի բոլոր բջիջներում, գլխավորապես՝ սրտի և լյարդի բջիջներում: Արյան պլազմայում ԱՍԱՏ-ի ակտիվությունը բավականին ցածր է, սակայն լյարդի հյուսվածքների և մկանների վնասման դեպքում այն արտազատվում է արյան մեջ: Ինչպես նաև, ԱՍԱՏ-ի ակտիվությունը զգալի չափով մեծանում է սրտի ինֆարկտի ժամանակ: Այսպիսով, ASAT-ը լյարդի ախտահարման ցուցանիշ է հանդիսանում:

### Մեթոդ Կինետիկ

**Կենսասնումուշ** Երակային արյուն Clot-Activator

### Հետազոտության նախապայմանները

- առավոտյան քաղցած՝ առնվազն 8 -12 ժ.
- ջուրը՝ առօրյա կարգով
- նախօրեին խուսափել սննդային չարաշահումից
- բացառել սննդակարգից ճարպային մթերքները՝ թեստից 24 ժամ առաջ
- բացառել սննդակարգից ալկոհոլը՝ թեստից 24 ժամ առաջ
- ԿՏ, մամոգրաֆիա և ճառագայթային հետազոտություններից պետք է անցնի 2-3 օր
- մինչև 1 տարեկան երեխաները նմուշառումից 30-40 րոպե առաջ չպետք է ուտեն
- 1-5 տարեկան երեխաները՝ նմուշառումից 2-3 ժամ առաջ չպետք է ուտեն

### Իրականացման ժամանակացույց

արդյունքը՝ տվյալ օրը 17:00 :

## Ալանինամինոտրանսֆերազ (ALAT) 1000 դրամ

### Նկարագիր

Ալանինամինոտրանսֆերազը (ALAT) ֆերմենտ է, որը գտնվում է օրգանիզմի բոլոր բջիջներում, գլխավորապես, լյարդում և երիկամներում: Նորմալում ALAT-ի ակտիվությունն արյան մեջ շատ ցածր է: Լյարդի հետ կապված խնդիրների դեպքում ֆերմենտն արտազատվում է արյան մեջ, սովորաբար մինչ այնպիսի բնորոշ ախտանիշների ի հայտ գալը, ինչպիսին է դեղնախտը: Այդ պատճառով, ALAT-ը հաճախ օգտագործվում է որպես լյարդի ախտահարման ցուցանիշ:

### Մեթոդ Կինետիկ

### Կենսասնումուշ Երակային արյուն Clot-Activator

### Հետազոտության նախապայմանները

- առավոտյան քաղցած՝ առնվազն 8 -12 ժ
- ջուրը՝ առօրյա կարգով
- նախօրեին խուսափել սննդային չարաշահումից
- բացառել սննդակարգից ճարպային մթերքները՝ թեստից 24 ժամ առաջ
- բացառել սննդակարգից ալկոհոլը՝ թեստից 24 ժամ առաջ
- ԿՏ, մամոգրաֆիա և ճառագայթային հետազոտություններից պետք է անցնի 2-3 օր
- մինչև 1 տարեկան երեխաները նմուշառումից 30-40 րոպե առաջ չպետք է ուտեն
- 1-5 տարեկան երեխաները՝ նմուշառումից 2-3 ժամ առաջ չպետք է ուտեն

### Իրականացման ժամանակացույց

արդյունքը՝ տվյալ օրը 17:00 :

## Գամմա-գլուտամիլտրանսֆերազ (GGT) 1000 դրամ

### Նկարագիր

Գամմա-գլուտամիլտրանսֆերազը (GGT) միկրոսոմալ ֆերմենտ է, որը մասնակցում է ամինաթթուների նյութափոխանակությանը: GGT-ի մաքսիմալ ակտիվությունը նշվում է երիկամներում, լյարդում, ենթաստամոքսային գեղձում: Տվյալ անալիզը նշանակվում է լյարդի ախտահարումները, լեղուղիների պաթոլոգիաները (օրինակ, դրանց խցանումը քարերով) հաստատելու համար:

Ինչպես նաև նշանակվում է, եթե հայտնաբերվել են հիմնային ֆոսֆատազի բարձր ցուցանիշներ, որպեսզի պարզվի, թե ինչի հետ է դա կապված: Բուժման ընթացքում անալիզն իրականացվում է որոշակի հաճախականությամբ, որպեսզի գնահատվի թերապիայի արդյունավետությունը և անհրաժեշտության դեպքում փոփոխվի մեթոդիկան: Շատ դեպքերում գամմա-գլուտամիլտրանսֆերազի քանակությամբ կարելի է դատել լեղուղիների և լյարդի ախտահարումների ծանրության մասին:

### Մեթոդ Կինետիկ

### Կենսանմուշ Երակային արյուն Clot-Activator

### Հետազոտության նախապայմանները

- առավոտյան քաղցած՝ առնվազն 8 -12 ժ
- ջուրը՝ առօրյա կարգով
- նախօրեին խուսափել սննդային չարաշահումից
- բացառել սննդակարգից ճարպային մթերքները՝ թեստից 24 ժամ առաջ
- բացառել սննդակարգից ալկոհոլը՝ թեստից 24 ժամ առաջ
- ԿՏ, մամոգրաֆիա և ճառագայթային հետազոտություններից պետք է անցնի 2-3 օր
- մինչև 1 տարեկան երեխաները նմուշառումից 30-40 րոպե առաջ չպետք է ուտեն
- 1-5 տարեկան երեխաները՝ նմուշառումից 2-3 ժամ առաջ չպետք է ուտեն

### Իրականացման ժամանակացույց

արդյունքը՝ տվյալ օրը 17:00 :

## Լակտատդեհիդրոգենազ (LDH) 1000 դրամ

### Նկարագիր

Լակտատդեհիդրոգենազը (LDH) ցինկ պարունակող ներբջջային ֆերմենտ է, որը պարունակվում է օրգանիզմի գրեթե բոլոր բջիջներում: LDH-ը մասնակցում է կաթնաթթվի օքսիդացմանը, որի արդյունքում ձևավորվում է պիրուվատ միացություն: Լակտատդեհիդրոգենազը մեր օրգանիզմում ներկայացված է 5 իզոֆերմենտներով:

Տվյալ միացությունները հատուկ են այս կամ այն հյուսվածքներին, ընդ որում հիմնական ակտիվությունը նշվում է կմախքային մկաններում, սրտամկանում, արյան կարմիր գնդիկներում՝ էրիթրոցիտներում, լյարդի և երիկամների հյուսվածքներում, և տարբերվում են ոչ միայն կառուցվածքով, այլ նաև գլյուկոզի օքսիդացմանը իրենց ազդեցությամբ: Արյան մեջ բոլոր իզոֆերմենտներն առկա են այս կամ այն քանակությամբ, միասին կազմելով LDH-ի ընդհանուր քանակը, որն էլ որոշվում է հետազոտության ընթացքում:

Լակտատդեհիդրոգենազը համարվում է ներբջջային ֆերմենտ և արյան մեջ տվյալ ցուցանիշի բարձրացումը վկայում է այն մասին, որ հյուսվածքային բջիջները ենթարկվել են քայքայման, որի արդյունքում մեծ քանակի LDH է արտազատվել: Տվյալ հետազոտությունը սովորաբար նշանակվում է մի շարք պաթոլոգիկ վիճակների կասկածի դեպքում, ինչպես օրինակ՝ սրտամկանի ինֆարկտի, հեմոլիտիկ անեմիայի ախտորոշման դեպքում: Ինչպես նաև LDH-ի բարձր մակարդակ է նկատվում մի շարք ֆիզիոլոգիական վիճակներում, ինչպես օրինակ՝ հղիության ժամանակ, երեխաների մոտ:

**Մեթոդ** կինետիկ **Կենսամուշ** Երակային արյուն (Clot-Activator)

### Հետազոտության նախապայմանները

- առավոտյան քաղցած՝ առնվազն 8 -12 ժ
- ջուրը՝ առօրյա կարգով
- նախօրեին խուսափել սննդային չարաշահումից
- բացառել սննդակարգից ճարպային մթերքներ թեստից 24 ժամ առաջ
- բացառել սննդակարգից ալկոհոլը թեստից 24 ժամ առաջ
- ԿՏ, մամոգրաֆիա և ճառագայթային հետազոտություններից պետք է անցնի 2-3 օր



- մինչև 1 տարեկան երեխաները նմուշառումից 30-40 րոպե առաջ չպետք է ուտեն
- 1-ից 5 տարեկան երեխաները՝ նմուշառումից 2-3 ժամ առաջ չպետք է ուտեն

**Իրականացման ժամանակացույց** Արդյունքը՝ տվյալ օրը 17:00

**Հիմնային ֆոսֆատազ 1000 դրամ**

### Նկարագիր

Հիմնային ֆոսֆատազը ֆերմենտների խումբ է, որը պարունակվում է օրգանիզմի գրեթե բոլոր հյուսվածքներում, առավելապես՝ լյարդում, ոսկորներում և ընկերքում: Բջջիցներում ֆոսֆատազները մասնակցում են ֆոսֆորաթթվի մնացորդի՝ օրգանական միացություններից անջատման ռեակցիաներում:

Ընդհանուր հիմնային ֆոսֆատազի ակտիվությունը բարձրանում է մի շարք հիվանդությունների դեպքում, որոնք ուղեկցվում են լյարդի, ոսկորների, երիկամների և այլ օրգանների հյուսվածքների վնասման դեպքում: Հիմնային ֆոսֆատազի ակտիվությունը բարձրանում է հղիության ժամանակ, ինչպես նաև բարձր է երեխաների մոտ ոսկորների աճի շրջանում:

### Մեթոդ կինետիկ

**Կենսանմուշ** Երակային արյուն (Clot-Activator)

### Հետազոտության նախապայմանները

- առավոտյան քաղցած՝ առնվազն 8 -12 ժ
- ջուրը՝ առօրյա կարգով
- նախօրեին խուսափել սննդային չարաշահումից
- բացառել սննդակարգից ճարպային մթերքներ թեստից 24 ժամ առաջ
- բացառել սննդակարգից ալկոհոլը թեստից 24 ժամ առաջ
- ԿՏ, մամոգրաֆիա և ճառագայթային հետազոտություններից պետք է անցնի 2-3 օր
- մինչև 1 տարեկան երեխաները նմուշառումից 30-40 րոպե առաջ չպետք է ուտեն
- 1-ից 5 տարեկան երեխաները՝ նմուշառումից 2-3 ժամ առաջ չպետք է ուտեն

**Իրականացման ժամանակացույց**

Արդյունքը՝ տվյալ օրը 17:00

**Վերքային մակերեսից մանրէաբանական հետազոտություն ՀՄԴ  
(հակաբիոտիկներ) զգայունության որոշմամբ**

**6000 դրամ**

### **Նկարագիր**

Վերքային մակերեսից միկրոօրգանիզմների հայտնաբերման և որոշման հետազոտություն է, միկրոօրգանիզմ հայտնաբերելու դեպքում որոշվում է զգայունությունը հակաբիոտիկների նկատմամբ

### **Մեթոդ**

դասական մանրէաբանություն (կուլտուրայի անջատում)

### **Կենսանմուշ**

քսուք վերքային մակերեսից

### **Հետազոտության նախապայմանները**

- Բացառել 24 ժամ տվյալ հատվածի լվացված լինելը
- Բացառել 24 ժամ տվյալ հատվածի վրա կոսմետիկ միջոցների, հաբերի և տեղային, փափկեցնող քսուքների կիրառումը

### **Իրականացման ժամանակացույց**

Թեստը կարող են հանձնել մինչև 17:00: Արդյունքը տրամադրվում է 3-5 աշխատանքային օրից:

